

613

p - 12

20 JUL 2010

Բ. Վաղեմյան Ա. ԲԱՐԱՍԵՆԱՆ

Handwritten signature

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ

ՀԱՐՑԵՐ

ԳԻՐԻ Բ.



Յաւելուած Ա. գրքի

(Նրեք հրատարակական գրոյցներ թիֆլիզում

1910 թ. ծմումը)

Վ.Ա.ՂԱՐՇԱՊԱՆ

Տպարան Մայր Աթոռի Ա. Էջմիածնի

1911

613

Բ-12

25 FEB 1913

Հեղինակի աշխատութիւնները օտար լեզուներով.
Բնութիւն.

Труды и сообщения, напечатанные въ протоколахъ и сборникахъ,
издаваемыхъ Императорскимъ Кавк. Медич. Обществомъ.

- 1) О методахъ изслѣдованія внутренней архитектуры человѣческаго мозга съ описаніемъ усовершенствованнаго авторомъ микрометра (мед. сборн. № 29, также отдѣльною книжкою)
- 2) Краткое сообщеніе о Вѣнской работѣ автора микроскопическаго изслѣдованія дна 4-го желудочка мозга (прот. № 6, 1881—2 г.)
- 3) Обѣ экспертизы по дѣлу о смерти Нины Андреевской (прот. 1878—9 г.)
- 4) Мнѣніе и заключеніе по дѣлу о духовномъ завѣщаніи д-ра И. Юрьевича (сборникъ № 34)
- 5) Разборъ нѣкоторыхъ яко—бы научныхъ доводовъ д-ра И. Каспарянина на судѣ по дѣлу покойной Сургуновой (прот. 1884—5 г.)
- 6) Обѣ анемцефалин. Демонстрированіе черепа безмозглаго новорожденнаго (прот. 1882—3 г.)
- 7) Интересный случай дифтерита (прот. 1879—80 г.)
8. Tabes dorsualis cerebrealis съ рѣдкимъ измѣненіемъ сус-тава (сборн. № 39)
- 9) Обѣ опіофагизмѣ (прот. 1881—2 г.)

Заказкавъ.

ри селѣ

о каторг-
протоколы

мансанхъ
—4 г. и

въ.—Дѣ-
1885 г.)
31—2 г.)

ти (прот.

употреб-

бляемыхъ
прованіе

вк. Мед.
мъ отче-
81 г.)

брошюръ

убличная
ти лѣтн.
нижками.

менными
ду 30-ти

ЛѢТН. П. К. М. 00—ва. Апр. 1895 г.)

613
F-12

610
37-FL

Բժշկապետ Ա. ԱՍԱԼՅԵԱՆ

10

„ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԵԱՆ“

Յաւելուած



ԼՐԱՑՈՒՑԻՉ ՄԱՍՆ

(Երեք հրապարակական զրոյցներ Թիֆլիզում
1910 թ. ծմունք)

ՃԱՂԱՐՇԱԳԱՏ

Տպարան Մայր Աթոռոյ Ա. Էջմիածնի

1911

1976

213
0073

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

Կարողիկոսին Ամենայն

Հայոց եւ Ծայրագոյն

Պատրիարքին

Ս. Էջմիածնի

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ

ՄԱՏԹԷՈՍԻ Բ-Ի

ԱՄԵՆԱԽՈՆԱՐԶ

ՈՐԴԻԱԿԱՆ

ԱԿՆԱԾՈՒԹԵԱՄԲ

11

ՀԵՂԻՆԱԿԸ

I ԶԻՆՅ


ՏԻԿՆԱՅԷ և ՏԵՍՐԷ.

Վերջին 5 տարին ձմեռները Պարիզ անցկացնելուց յետոյ, այս ձմեռ նորից Թիֆլիս մնալով՝ ինձ համար թւալի եղաւ մեր այստեղի հայկական ընկերական կեանքի դանդաղանալը, որ չասեմ ամայանալը, բացի մի երկու ուրախալի երևոյթները, ինչպէս օրինակ՝ տեղումս մի շատ օգտաւէտ զիտական հաստատութեան հիմնւիլը, այն է՝ Հայ Գիւղատնտեսական և Տնայնագործական Ընկերութիւնը, որի ընդհանուր ժողովներում հայ մարդիկ միասին հաւաքւած հայերէն զեկուցումներ են լսում և իրանց փորձերը և տեղեկութիւնները դիւրաւ մայրենի յեզուով իրար հաղորդում։ Ուրախալի է նաև «Աղբիւր-Տարազի» Գրական-Գեղագիտական Սալօնի տարէ-ցտարի հաստատուելը, որ արժանի է աւելի լայն շրջանների համակրութեան։

Առաջւայ ժամանակ Թիֆլիսում յայտնի էին մի քանի հայ տներ, որոնք հայկական սալօնների դեր էին կատարում, ուր մեր հայ մտաւորականները, ինտելիգենտ կոչւած դասը, զանազան խմբակցութիւնների բաժանւած՝ շաբաթը կամ

երկու շաբաթը մի անգամ հրաւերքի երթալով այդ գերդաստանների երեկոյթներին՝ յարմար միջավայր էին գտնում մտքերի փոխանակութեան, նորանոր գաղափարների և զեղազիտական նորութիւնների փոխադարձ հաղորդակցութեան. միևնոյն ժամանակ բնականաբար մշակուած էին այդտեղ մեր կեանքի հրատապ հարցերը, որոնք անմիջապէս դառնում էին մեր մամուլի բաժին:

Ես կը ցանկայի, որ այսօրւայ իմ զրոյցը ձեզ հետ այդպիսի մի երեկոյթի օրինակ լինէր. ուստի թոյլ տուէք ինձ՝ ձեզ զբաղեցնել իմ մի նոր աշխատութիւնով, որ անցեալները հրատարակեց «Եկեղեցական առողջաբանութիւն» վերնագրով և որի մասին ես ստացել եմ թէ մասնաւոր նամակներով հեղինակաւոր անձերից և թէ մեր մամուլի միջոցով բաւական շատ քննադատութիւններ. սակայն մինչև օրս դեռ պատասխանած չեմ հրապարակով այդ ամենին:



Զրոյցիս նպատակն է այժմ՝ մէկ կողմից այդ քննադատութիւնների արժէքը պարզել, միւս կողմից՝ հաւաքական բացատրութիւն տալ զրքիս վիճելի կէտերի առիթով. այս կերպ՝ շօշափուած վիճելի հարցերը անշուշտ աւելի և աւելի պիտի մշակին:

Սակայն նախքան զրոյցիս այդ նիւթին անցնելը պարտք է՝ ունկնդիրներին դեռ ծանօթացնել զրքիս բովանդակութեանը, որին շատերը

ձեղանից գուցէ տեղեակ չեն, քանի որ առհասարակ տեղիս հայ ընթերցողների մեծամասնութիւնը զժբաղտաբար սովոր է այժմ աւելի օտար լեզուներով ամեն տեսակ ամենա նորութիւններ կարդալ, քան թէ հայերէն մի նոր գրուածք, որքան էլ սա ինքնուրոյն և շահեկան աշխատութիւն համարւի*):

Բացի այդ պէտք է օգտուեմ այս հանգամանքից լրացնելու զրքիս առաջաբանում խոստացածս. ես ասել եմ՝ «վերջացրած էի զրքոյկս, երբ այս օրերս մի համառօտ բեֆերատից տեղեկացայ թէ Միլան քաղաքի ս. Անտօնիոսի ընկ. Նիստում մի ընդարձակ գեկուցում է կարդացել Fra Agostino Gemelli, վանական և միևնոյն ժամանակ յայտնի առողջաբան բժիշկ, հետեւեալ վերնագրով՝ Il problema igienico nelle chiese— այս աշխատութեան բնագիրը դեռ չեմ տեսած. ապագային սրա մասին պիտի խօսեմ»:

Այս դիտումով ես դիմեցի վենետիկ Միթարեան ուխտի միաբան բարեկամիս՝ Հ. Գաբր. Նահապետեանցին, խնդրելով ինձ համար ձարելու Զեմիլլիի գեկուցագիրը, և բովանդակութիւնը հայերէն ինձ հաղորդելու: Հ. Գաբրիէլը բարի

*) Այս ներածութիւնից յետոյ ես ունկնդիրներին առջև պատկերացրի զրքիս համառօտ բովանդակութիւնը, որ կազմւում է զրոյցիս Ա. մասը և որը տպագրութեան չենք յանձնում: Ծան. հեղ.

եղաւ ինձ հասցնելու այդ գրքոյկը, նախապէս թարգմանել տալով գրեթէ առաջին մասը, որ և բերած է այս տարւայ «Բազմավէպի» Յուն-ւարի տետրում: Զեմելլիի հրատարակութեան հետ ստացայ և հ. Գաբրիէլի նամակը, որով տեղեկացնում է թէ խոստացած շարունակու-թիւնը հայերէն չէ տպւելու, չափազանց մասնագիտական բնոյթ ունենալուց:

Քանի որ այս օրւայ գրոյցիս մէկ նպատակն էլ է՝ տալ կարևոր լրութիւն կամ «յաւելւած» գրքիս, հարկ եմ համարում Զեմելլիի գրքոյկից բերել այստեղ հետաքրքրաշարժ կտորներ՝ ոչ միայն լիակատար հաստատող տարիներ առաջ իմ քարոզած մտքերի, այլ և մատենագրական այն-պիսի ցուցումներով, որոնք կարող են նպաստել մեր ապագայ ուսումնասէրներին եկեղեցական առողջաբանութեան խնդիրները աւելի հիմնաւոր մշակելու, ուրեմն լրացուցիչ պիտի համարւին գրքիս ներածութեանը:

Հ. Զեմելլին գրում է՝

«Մեր ընկերական կեանքի մի մասը եկեղեցու մէջ կանցնի, հարկաւոր է ուրեմն հաւա-տացեալներին առողջապահական նոյն ապահո-վութիւնը տալ, ինչ որ կընծայեն հասարակաց միւս շէնքերը և սրանով գործակցել ընկերային առողջութեան պաշտպանութեանը, որ այսօր, ինչպէս սովորեցնում է գիտութիւնը, մի մեծ պարտք է, մանաւանդ վարակիչ հիւանդութիւն-ների նկատմամբ»:

Այստեղ բերում է նա ի հաստատութիւն իւր բանի գերապայծառ Ֆրանչեսքինի, Ֆանօյի եպիս-կոպոսի, հետեւեալ խօսքերը.

«Իրաւացի կգտնենք, որ քահանաները, և առհասարակ հոգեւորականները, արդի գիտութեանց ճշմարիտ և հաստատ միջոցներու հետեւն, որպէս զի ժողովրդի մտքից փարատեն հնցած և անի-մաստ նախապաշարումները հաստատելով այն միջոցների գործածութիւնը, որոնք գիտութեան նոր առաջադիմութեան համեմատ օգտակար են հասարակաց բարեկեցութեան և ժողովրդական առողջապահութեան»: Նոյն բանը կյայտնէ, ըստ հեղինակի, Ռէշլիոյ Էմիլիայի եպիսկոպոսը:

Զեմելլիի սեփական խուզարկութիւնները սահմանափակ շրջանի կվերաբերին, այն է՝ ու-սումնասիրել նախ եկեղեցիների հովհարու-թեան և ջեռուցման կամ տաքացնելու խնդիրը և ապա՝ եկեղեցիների յատակի և պա-տերի փոշու յատկութիւնները:

Առաջինների հետազոտութեան համար նա ցոյց է տալի գրականական աղբիւրները, որ և մենք նպաստաւոր ենք համարում մեր մասնա-գէտների համար և բերում ենք ծանօթ. մէջ*.

* Ծան. 1. Fischer. Ueber die Einrichtung von Kir-chenheizungen. Gesundheits Ingenieur 1901.

2. Rietschel. Die Auswahl des Ventilationssystem für Kirchen, Schulen, Teater u. s. w. Hygienische Rundschau. Berlin 1897.

3. Remlinger. Les églises au point de vue de l'hygiène. Revue d'Hygiène 1900.

Ռեմիլինգեր հեղինակից Ջեմելլին բերում է հետևեալ դիտողութիւնները: «Եկեղեցիներու մէջ էլ երբեմն դժարաւ շնչելի մթնոլորտ կարող է կազմել, երբ բազմութեամբ լցւած է, այս դէպքերում շատ հեռու ենք այն 30—40 խորանարդ մետր օդ ունենալուց, որ ամեն անհատ, ըստ առողջաբանութեան, պէտք է ունենայ բազմամարդ սրահում, և իրօք էլ համեմատաբար անօգուտ է երբ անհատի գլխի վերև 20, 30, 40 մետրից աւելի բարձրութեամբ օդի սիւն կայ, ինչպէս մեծ մասով մեր եկեղեցիների մէջ: Առողջաբանական դիտողութեանց համեմատ բոլոր այս բարձրութեան օդը համեմատաբար անօգուտ է հորիզոնական տարածութեան օդի: անբաւարարութեան քովը, քանի որ մարդ կարող է անշնչացած մեռնել ջրհորի մէջ, ունենալով իսկ իր գլխի վերև օդի նոյն չափերով բարձրութեան սիւն: Ուստի բազմութեամբ լցւած ժամանակ հարկէ ունենալ եկեղեցիներում արուեստական հովհարութեան գործիքներ, որոնք այսօրւան օրս շնորհիւ էլէքտրական հոդմահարների, կարելի է ամեն տեղ հայթայթել և ամենաշնչին ծախսերով, այդպիսի դէպքերում եկեղեցիների պատուհանների և դռների բաց թողնելը ինքն ըստ ինքեան հասկանալի է, երբ եղանակը չի արգելում այդ:»

Բացի պատի միջի մուկտիպլիկատորների հնոցները, ձմեռ ժամանակ եկեղեցին տաքացնելու ամենից պատշաճ ձևն է, ուր որ հնարա-

ւոր է, շոքի խողովակներով ջեռացնելը, որ ըստ Ռեմիլինգերի, իբր աւելի նուազ ծախք կպահանջէ (Եւրոպայում, կաւելացնենք. ծ. հ.)

Երրորդ հարցը որ Ջեմելլին քննում է, այն է թէ՛ եկեղեցին կարող է վարակիչ հիւանդութիւնների փոխանցման միջոց դառնալ:

Նա ասում է՝ «Ըստ մեծի մասին այդպիսի վարակում կարող է տեղի ունենալ եկեղեցու յատակում նստած փոշու միջոցով, որ շատ անգամ բարձրանում է և երևում է օդի մանրամաղի մէջ և անցնում է մարդկանց թոքերին».

Ձեկուցման մեծ մասը նւիրւած է այս հարցի հետազոտութիւններին այստեղ էլ նա ցոյց է տալի գրական աղբիւրները, որոնցից մի քանիսին բերում ենք ներքևի ծանօթութեամբ*:

Ահա թէ ինչպէս է կատարել իւր սեփական փորձերը բժ. Fra A. Gemelli.

Graziani-ի գործածած մեթոդին հետևելով,

*) 1. Graziani. Sul contenuto batterico della polvere delle Chiese e del sudiciume dei Confessionali: (Giornale della Reale societa d'igiene 1907.

2. Layet. Influence des poussières des bibliothèques. Gaz. hebdomad. des sciences médic. Bordeaux 1883.

3. Thurini. Ricerche sui germi dell'aria e della polvere dei luoghi abitati. (Gior. R. Soc. d'igiene. 1890.)

4. Malyeau. Les poussières des chambres et le pain des soldats. (Revue d'Hygiène 1891).

5. Tirelli et Ferrari. Ricerche bacteriologiche sul pulviscolo delle sale da ballo. (Annali di fren. e sc. affini. Vol. VIII. 1903)

նա թափում է փոքր ինչ հաւաքած եկեղեցու յատակի փոշին 10 սանտիմետր խորանարդ թորած անապակ ջրի մէջ. մի քիչ շարժելուց յետոյ թողնում էր որ թանձր նիւթը տմանի յատակը նստի. գտում էր ջուրը և այսպէս վերին մասը ներարկում էր երկար ասեղի միջոցով ճաքարների կամ ճերմակ խլուրդների կողի կամ որովայնի կաշու տակ:

Այն հիւանդութիւններից, որով մահանում էին յիշեալ կենդանիք, նա եզրակացնում էր թէ փոշու մէջ որ տեսակի հիւանդածին և մահաբեր մանրէներ եղած են:

Եկեղեցիների փոշին, ի հարկէ, հաւաքւած էր լինում անարգասացրած գործիներով և եղանակով: Այս կերպ ուսումնասիրւել են վերին Խալիլոյ երեսուն եկեղեցիների փոշին, որ վերցւում էր այն տեղերից ուր բազմութիւն քիչ կերթայ, ինչպէս ժամատուն, կողմնակի մատուռները, մկրտարանները. իսկ միւս մասը՝ այն տեղերից, ուր բազմութիւն շատ կերթայ, ինչպէս աղօթատունների միջավայրերը, դասը:

Ահա դօկտ. Հ. Զեմելլի եզրակացութիւնները, որ մասամբ միայն բերած եմ զրքիս առաջաբանի մէջ:

1. Յատակի կամ սալարկի փոշու պարունակած մանրէների (միկրօբների) քանակութեան կողմից, եկեղեցիները միջին տեղն են բռնում ընդ մէջ անկեղանոցների, թատրոնների, դպրոցների, զինուորանոցների, պարասրահների:

2. Եկեղեցու փոշիով պատւաստւած կենդանիները 45 առ 100 ներկայացրին հիւանդութեան դէպքեր, որը աւելի պակաս է քան թէ փողոցների փոշու ախտածնութիւնը, սակայն ապացոյց է որ եկեղեցու փոշին էլ պարունակում է անկասկած հիւանդաբեր մանրէներ:

3. Եկեղեցիների փայտեայ սալայատակի փոշին մանրէների աւելի մեծ քանակութիւն է պարունակում, հետևաբար առաւել ախտածին սերմեր կունենայ, քան թէ մարմարեայ կամ ցեմենտի սալայատակը. փայտը ծծում է ջուր և իւր խորշիկների մէջ պահում է փոշին:

4. Ամենալաւ յատակումը պէտք է ընդունել ոչ թէ մատտօնիինը, այլ՝ բաղադրութիւն ցեմենտի և փայտի փոշու. սա պահպանում է տաքութիւնը. այս խմորին կարելի է տալ ուղած գոյնը և պատկերազրութիւն անել վերան, ծախքն էլ սակաւ է: Դա խորշիկներ չունի, ծծող էլ չէ և մաքրւում է դիւրութեամբ*:

5. Մերժելու են ոտերի տակի փռւածքները՝

*) Թիֆլիզի Քամոյենց եկեղեցու սալայատակման խնդրին նայելով Զեմելլի տեսակէտից՝ աւելի յարմար պիտի համարւի յիշւած խառնուրդով սալայատակելը, քանի որ դրանով կլրացւի յարգելի նկարիչ Բաշինջաղեանի ցանկութիւնը յատակը եկեղեցու «ստիլին» (ոճին) յարմարցնել: Սակայն «պարկետային» յատակումն էլ խոտելի չէ, քանի որ նա մեղրամոմով և ճարպով յաճախ քսւելու է, ուրեմն ջուր և փոշի չի վերցնի: Ծան. հեղ.

գորգեր, խսիրներ, մինդերներ, որոնք ամեն տեսակ միկրոօրգանիզմներն են դառնում:

6. Եկեղեցիներում նստարաններն էլ փոշի շատ են վերցնում. սակայն սոցա վրայից փոշին դիւրութեամբ մաքրում է Vacuum—cleaner մեքենաներով, որ շատ տարածւում են այժմ:

7. Յատակների մաքրումը և ախտահանումը պէտք է կատարել Լիզոֆորմի (*Lysosformi*) լուծւածով* և որքան կարելի է յաճախ. նոյնպէս պէտք է ջրով սրակել նստարանները ժամանակ առ ժամանակ:

8. Զեմելլին արդարացի կերպով խորհուրդ է տալի, որ եկեղեցու պատերին յայտարարութիւն կպցնելի զգուշացնելու համար ժամաւորներին, որ չ'խորխեն յատակի վրայ և դրա համար ամեն եկեղեցւում պիտի դրեն զանազան տեղերում շատ խորխամաններ, միմիայն ջրով կիսալցւած, որոնք ամեն երեկոյ պիտի թափեն արտաքնոցները:

9. Քննելով կաթոլիկ եկեղեցիներում դրած օրհնած ջուրը թէ մանրադիտակով և թէ մանրէաբանօրէն, Զեմելլին գալիս է նոյն եզրակացութիւններին, ինչ որ Bruns-ը, Vincenzi-ն, Abba-ն և Remlinger-ը. թէ այդ ջուրը շատ վտանգաւոր է հաւատացեալների առողջութեան, քանի որ

*) Լիզոֆորմի լուծւածը աւելի հաստատ ախտահանիչ է, քան թէ բորային թթուն, որ գրքումս մի տեղ յիշում եմ:

Ծան. հեղ.

հաստատւած է, որ աչքացաւ է պատճառած, դիֆթերիաի և տուբերկուլոզի տարածման առիթ է եղած և այդ հիւանդութեանց սաղմերը—զանազան ժամանակ դառնում են այդ ջրում:

Զեմելլի գրքի բովանդակութիւնը այս չափով տալուց յետոյ, ես այժմ դառնում եմ իմ բռն նպատակիս, այն է՝ զեկուցանել ձեզ այն քննադատութիւնները, որոնք երևացին գրքիս մասին անցեալ տարւայ վերջում և այս տարւայ սկզբում և որոնք մինչև օրս իմ ձեռս հասած են:



Ընդհանրապէս պէտք է ասեմ, որ այս առաջին անգամն է, կարծեմ, վերջին տարիների մեր մամուլի բարձրին բոլորովին հակառակ, որ մեր զանազան կուսակցութիւններին պատկանողները և նրանց գրական օրգանները արդարութիւնով վերաբերեցին մի նոր հայ հրատարակութեան և չքաշկուտեցին նրան իրանց անձնական և «Թայֆայական» նեղ տեսակէտներով: Եթէ վիճաբանութիւն և նկատողութիւններ կան գրուածքիս այս կամ այն կտորի դէմ, դրանք անձնական թշնամութեան և կուսակցական կոյր կրքի հետեանք չեն, այլ՝ միայն ճշմարտութիւնը պարզելու համար առաջ բերւած: Այդ կողմից շնորհապարտ եմ բոլոր քննադատներին մինչև օրս:

Մինչև այժմ եղած գրաքննութիւնները կարելի է բաժանել երեք դասի. առաջինը՝ մեր բարձրաստիճան հոգևորականների կողմից, երկ-

բորդը՝ բժիշկ-ընկերներին կողմից և երրորդը՝ ոչ-բժիշկ մասամբ ինձ յայտնի և անյայտ անձերի կողմից:

Առաջին դասից ես պետք է նախ յիշատակեմ այստեղ խորին ակնածութեամբ մեր ազգընտիր նոր Հայրապետի՝ Ամենայն Հայոց Կաթողիկոս Մատթէոս II-ի քննադատութիւնը իր ընդարձակ նամակի մէջ, որ բաղդ ունեցայ ստանալու անցեալ տարւայ նոյեմբերի վերջերին, և երկրորդ նամակով (յունվարի մէջ ստացւած ի պատասխան իմ գրութեան) նորին Սրբութեան թոյլտուութիւնը՝ հրապարակի յանձնելու որոշեալ կտորներ նախընթաց նամակից: Ահա ինչ խօսքերով է սկսւած այդ հեղինակաւոր նամակի քննադատութիւնը: Ես բնականաբար պիտի բաց թողնեմ այդ կտորներից քաղաքավարական իմ անձիս վերաբերեալ բարեհաճ ածականները և դարձուածքները:


«Ձեր... «Եկեղեցական առողջաբանութիւն» անուն աշխատութիւնը ստացայ և ուշադիր հետեցայ ձեր աշխատութեան ամեն մէկ տողին: Անվիճելի ճշմարտութիւն մըն է այսօր թէ՛ սխալ ըմբռնուած քաղաքակրթութիւնը մէկ կողմէն, տգիտութիւնը, քարացած սովորութիւններն և նախապաշարումները միւս կողմէ բարոյից անկման, կրից անզսպութեան տեղի տուած՝ շարք մը տարափոխիկ հիւանդութիւններ, մանաւանդ փատ ախտը գոգցես փայփայանքով կը մնուցանեն և ահռելիօրէն կը տարածեն: Գիտական աշ-

խարհն այս ողբալի վիճակին ի դարման, մանաւանդ այնքան ախտատարած մանրէներու գոյութեան հաստատուելէն ի վեր, առողջապահիկ պայմանները մեծ խնամքով կը մշակէ՝ մարդկային սեռը ալլասերումէ, ֆիզիքական քայքայումէ և նոյն իսկ տարածած մահուանէ փրկելու համար»:

«Առողջաբանական գիտութեան և առողջապահիկ պայմաններու շարքէն դուրս պետք չէր մնար և եկեղեցական առողջաբանութիւնը: Ասի մշակելու առաջնութեան պատիւը... ձեզ կը պատկանի, ինչ որ մեծ և կարևոր պակաս մը կը լեցնէ մեր այնքան խնամքի կարօտ կեանքին մէջ: Կը շնորհաւորեմ ձեզ և ամեն յաջողութիւն կը մաղթեմ»:

Այս առաջաբանից յետոյ Վեհափառ Հայրապետը մի առ մի թուում է գրքիս մէջ պահանջւած նախ՝ այն բարեփոխութիւնները, որ այժմէն իսկ աստիճանաբար կարող են գործադրւել ըստ իր բարձր հայեցողութեան: Ահա այդ կէտերը:

1) Եկեղեցիներում նստարաններ և աթոռներ ժողովրդի համար դնելը. 2) Եկեղեց. երաժշտութեան կարգաւորումը. 3) Եկեղեցիների մէջ օգափոխիչ գործիք հաստատելը. 4) Ձմեռնային ժամանակ եկեղեցիների ջեռուցումը (տաքացնելը). 5) Ախտավարակ երկսեռ անձանց մինչև առողջանալը պսակման արգելքը. 6) Գլխագնի և դրամօժտի ջնջումը. 7) Պահեցողութեան կամ պատիւաւոր ջաբանական տեսակէտով ալ բացատրուելը. 8) Ծննդկան մայրերի 8—9 օրից անկողնից ելնելը



և «քառասունքի» պահեցողութիւնը. 9) Գերեզմաններ ծառագարդելը. 10) Գերեզմանների շուրջը ծառաստանով թումբ շինելը. 11) Ննջեցելոց մարմինների լուացքն առողջապահիկ պայմանաց համաձայն կատարելը. 12) Ննջեցելոց թաղումը երեք օրով յետաձգելը. 13) (Դրա համար) գերեզմանատների մէջ մատուռ ունենալու պէտքը. 14) Բարեական և մեռելահամբոյրի ջնջումը. 15) Մեռելահացի՝ քելէխի ջնջումը. 16) Ննջեցելոց երեսկալի և նրա յարակից կտաւեղէնների ջնջումը կամ ապանելման (դէզինֆեկցիայի) ենթարկելը. 17) Մեռելական մետաղեայ, ինչպէս և շինծու ծաղիկներով (որոնք պահուում են ուրիշների էլ գործածելու համար) պսակներ դնելու նորամուտ սովորութեան աւելորդութիւնը և վնասները ժողովրդի համար. 18) Ննջեցեալները դազադակառքով՝ փոխանակ ուսերի վրա՝ գերեզման փոխադրելը. 19) Միևնոյն մեռելադազադի հասարակաց գործածութեան համար ամեն անգամ ապանելման ենթարկելու կարիքը. 20) Մեռելաթաղ քահանայից կառքով գերեզմանոց գնալու թոյլատուութիւնը:

«Այս եւ ասոնց նման կէտերը կամ բարեփոխումները Հայաստանեայց Եկեղեցւոյ հայեացքով կանոնական արգիւյթ մը չունին եւ կրնան այժմէն գործադրուիլ աստիճանաբար՝ ուր որ յարմարութիւն եւ միջոցներ կան»:

Վեհափառ Հայրապետն իր երկրորդ նամակում բարեհաճել է գրել.

«Կարելի էր եկեղեցիները ելեքտրական կանթեղներով լուսաւորելը նոյն այդ 20 կէտերու կարգն անցնել, ինչ որ սակայն մոմավաճառութենէ գոյացած շահուն կը բաղխէր, զոր իրաւամբ դիտած էք ձեր «Եկեղեցական առողջաբանութեան» մէջ: Այսուամենայնիւ՝ որտեղ որ յարմարութիւն ունին և կը խնդրեն՝ կը թոյլատրուի, ինչպէս թոյլատրեցինք Սիմֆերոպօլի եկեղեցիին, միայն տաճարներու բեմի կերոնները և մոմերը պահելով»:

Գալով իմ գրքիս մէջ շօշափւած աւելի ծանր խնդիրներին և առողջապահական տեսակէտով բարեփոխելու պահանջներին, Վեհափառը այդ կարգի մէջ գրել է հետեւեալ կէտերը.

« 1) Դիակիզումը. 2) Ս. հաղորդութեան մասնակցելու մատակարարութեան եղանակի փոփոխութիւնը. 3) Կուսակրօնութեան և քահանայից կրկնամուսնութեան խնդիրները. 4) Փեսացու և հարսնացու անձանց ճշտութեամբ տարիքի որոշումը. 5) Ազգակցական, խնամեալան և կնքահայրական ճիւղահամարի փոփոխութեան խնդիրները. 6) Ամուսնալուծման խնդիրը կանոնական սահմաններով ընդլայնելը:

«Այս և այլ ասոնց յարակից առողջաբանական պահանջները, որոնց մէջ ուշադրութեան արժանի աւելի ծանր խնդիրներ ալ կան, Հայաստանեայց ընդհանուր Եկեղեցւոյ իրաւասութեան կը վերաբերին: Այս կարգի խնդիրները բարեփոխելու, լուծելու և ի նորոյ կանոնելու հեղինա-

կութիւնը՝ Հայաստանեայց ընդհանուր համագ-
գային եկեղեցական ժողովին կը պատկանի:

«Քաջ գիտէք արդէն, թէ միայն քաղաքա-
կան տիրող հանգամանաց և պատճառներու հե-
տեանօք՝ 6 դարէ ի վեր կարելի եղած չէ համագ-
գային եկեղեցական ժողով գումարել: Այս ժողովի
գումարման պէտքը սակայն այլևս անհրաժեշտ
դարձած է. ուստի Թուրքիոյ հայոց արդի կացու-
թիւնը աստիճան մը անդորրանալէ և Ռուսիոյ
հայոց կարգ մը խնդիրները յարդարուելէ յետոյ՝
պիտի ձեռնարկենք այդ ընդհանուր եկեղեց. ժո-
ղովի գումարման գործին. կը յուսամ թէ յաջո-
ղինք»:

Հետևեալ տողերով Վեհափառը վերջացնում
է իր նամակը.

«Նուիրական պարտ կը համարիմ այժմէն
հաստատապէս յայտնել և յայտարարել, թէ Հա-
յաստանեայց եկեղեցւոյ հաւատոյ դաւանու-
թիւնն ու վարդապետութիւնն ամեն պարագայի
մէջ անձեռնմխելի պիտի մնայ, ինչ որ անպայ-
ման կը պահանջէ անոր գոյութեան եւ ինքնու-
րոյնութեան անխախտ պահպանման բացառակ
պէտքը»:

Մեզ կը մնայ խոնարհել հայրապետական
այդ որոշման առաջ և մաղթել աջողութիւն. Նորին
Սրբութեան բարձր նպատակին՝ գումարելու մեծ
ժողովը, որը պիտի լինի իր կաթողիկոսութեան
առեւտայիշատակելի գործը և թագն ու պսակը
այն եկեղեցական բարեփոխումների, որոնց մուտ-

քը իր հայրապետական իրաւունքով ինքը սկսած
է արդէն և յուսալի է թէ շարունակէ անսկուն,
ընտրելով իրան օգնականներ, հանգամանքների
ներածի չափ, լուսամիտ, եռանդուն և ժողովրդի
խսկական ցաւերը հասկացող թէ սինօղականներ
և թէ թեմական առաջնորդներ:

Դառնամ այժմ մի այլ բարձրաստիճան հո-
գևորականի համառօտ քննադատութեան, այն է՝
Կ. Պօլսի նախկին պատրիարք Օրմանեան արք-
եպիսկոպոսի նամակին: Նորին սրբազնութիւնը
գրում է.

«Իր ընդհանուր դիժերուն մէջ համամիտ
եմ ձեր «Եկեղեցական առողջաբանութիւն» եր-
կասիրութեան, երբ որ առողջաբանական պէտ-
քերը իբր սկզբունք կը նշանակէք: Արդէն կրնանք
ըսել թէ եկեղեցին՝ կամ լաւ եւ՝ ամեն կրօնական
նասասութիւն յառաջընթաց առողջաբանն է
եղած աւելանի մէջ»:

Այս տողերը ես դիտմամբ ընդգծում եմ,
իբրեւ մի հմուտ եկեղեցական իրաւագէտի կար-
ծիք, ի հաստատութիւն իմ գրքիս 3-րդ ընդհա-
նուր եզրակացութեան, որ շատ կարևոր է յե-
տագայ քննադատներին համար.

Շարունակելով սրբազան Օրմանեանի նամա-
կը՝ բերեմ երկու նրա խորհրդածութիւնները.
1) «Ինչ-ինչ եկեղեցական սովորութիւններ,
որոնց բարեփոխումը կը պահանջէք, այնչափ
սերտ կերպով կապուած են կրօնական կանխա-
կալ կարծիքներու հետ, որ անոնց հետ մաքառիլ

դժուար է, և ինչպէս 19 դարեր մարդկութեան հետ ապրեցան անհակառակ, 19 ևս, գոնէ 10 ևս կրնան տակաւին ապրիլ խաղաղութեամբ»:

Այո, պէտք է իսկոյն պատասխանեմ սրբազանի տողերին՝ չերկարելու համար, «կրնան ապրիլ», եթէ մեր ժողովուրդը այսուհետեւ էլ դեռ 10 դար մնայ նոյն տգիտութեան և խաւարի մէջ առողջապահական պահանջների նկատմամբ, ուր որ այժմ է:

Ահա և երկրորդ կէտը սրբազանի նամակում. «Ինչ-ինչ եկեղեցական կարգեր ալ նշանակած էք, որ միայն եկեղեցւոյ յատուկ չեն, այլ ընտանեկան և կենցաղական շրջանակներու ալ կը պատկանին, և ասոնց հակառողջական կողմերը փարատելու համար պէտք էր նախապէս ազդեցութիւն գործել զանազան համախմբութեանց վրայ, թատրոններու, ակումբներու, սրճարաններու՝ ընտանիքներու միջոցով. հետեալաւ լաւ ընտրութեան պէտք կայ... Դուք նորընտիր Կաթողիկոսին դիմած էք, և հարկաւ անոր կողմէ պէտք եղածը կը տնօրինուի: Առ այժմ այս չափով կը փակեմ իմ տեսութիւնները և կը շնորհաւորեմ զձեզ ոչ թէ ազդիս, այլ աշխարհիս պատկանող նիւթի մը վրայ առաջին անգամ ձեռնհասօրէն խօսած ըլլալուդ համար»:

Հոգևոր դասի քննադատութեանց շարքում պէտք է յիշել «Հովիւ» շաբաթաթերթի անցեալ տարւայ 46-դ համարի գրախօսականը Pessimiste ատորագրութեամբ: Ընդունելով աշխատութեանս

այն թերութիւնները, որոնց ինքս էլ ակնարկած եմ, Pessimiste-ը լիակատար համակրութիւն է ցոյց տալիս իմ պահանջած բարեփոխումներին և իր կողմից պնդում է նրանց շուտափոյթ իրագործման կարևորութեան վրա:

Վերջերս էլ դարձեալ «Մշակ» լրագրում (այս տարւայ № 54) երևաց մի յարգելի հոգևորականի՝ Մեսրոպ աւ. ք. Մելեանի գրախօսականը գրքիս առթով: Տէր Մեսրոպ հայրը գաղափարակից է մի՞նչ գրքիս համարեալ բոլոր կէտերում: Իր այս յօդուածում իմ փոխարէն բժիշկ ընկերներիս ընդդիմախօսութիւններին մի երկու շատ կարևոր բացատրութիւններ է տալիս. և որովհետեւ նրա շօշափած նիւթը և բացատրութիւնը զրոյցիս երկրորդ բաժանմունքին կը վերաբերին, այնտեղ և պիտի յիշեմ մանրամասնօրէն: Առ այժմ այսօրէն է հոգևոր դասի վերաբերմունքը իմ աշխատութեանս:

Այդ վերաբերմունքը, ինչպէս տեսանք, բարեազդաբար շատ մասով բարեհաճ է մեր պահանջած եկեղեցական բարեփոխումներին: Այս ուրախալի վաւերացումով վերջացնում եմ զրոյցներիս առաջին բաժինը:



II Զրոյց

Տիկնայք և Տեւրք.

Համաձայն նախկին զրոյցիս ծրագրին, մենք կանցնենք այժմ քննադատներին երկրորդ դասին՝ բժիշկ ընկերներին: Բաւական ընդարձակ գրա-
խօսականներ երևացին գրքիս առթով «Մշակ» լրագրի անցեալ տարւայ նոյեմբեր ամսի 252—255
չորս համարներում—բժ. Բ. Աղասարեանցինը.
և ապա գեկտեմբեր ամսի 278 №-ում դօկտ.
Վ. Արծրունունը. իսկ այս տարւայ «Աղբիւր—
Տարազի հրատարակած № 76 «Առողջապահ»
թերթում—երկու նոր քննադատութիւններ դար-
ձեալ բժ. Աղասարեանցի և Ա. ստորագրութեամբ
ինձ անյայտ մի բժշկի: Ստացած եմ և մասնաւոր
նամակներով մի քանի ակնարկներ գրքիս մա-
սին՝ Պօլսում յայտնի հայ գործիչ՝ դօկտ. Ն. Տա-
ղաւարեանի, և նոյնպէս յայտնի դօկտ. Փա-
շայեանի, որ այժմ գործում է Պարսից Բէնտէր
Գեազում: Բերանացի յայտնեցին ինձ իրանց
կարծիքները գրքիս մի երկու կէտի առթով՝
բժ. Ա. Բուդուղեանց և բժ. Ա. Շխեանց, ցոյց
տալով իրանց նախկին հրատարակութիւնները,
ուր իմիս հակառակ միտք են յայտնած:

Յիշածս անձնաւորութիւնները մեր հայ գիտա-
կան գրականութեան մէջ պատւաւոր տեղ են

բռնում իրանց երկարատե բեղմնաւոր հրատարա-
կութիւններով, իրանց յարուցած և պաշտպանած.
առողջաբանական կարեւոր հարցերով, ուստի դրանց.
բոլորի ջերմ համակրանքին իմ նոր աշխատու-
թեան ամբողջութեանը ես մեծ նշանակութիւն եմ
տալիս. նոյն այդ պատճառով էլ նրանց նկատու-
ղութիւնները գրքիս մի երկու կէտերի դէմ
կարելի է անուշադիր թողնել, գիտենալով որ
նրանց դիտողութիւնները բոլրած են անկեղծ
համոզմունքից՝ մեր գիտութիւնը հասարակաց.
օգտին ծառայեցնելու և ճշմարտութիւնը պար-
զելու:

Յարգելի արւեստակիցներս վիճում են ա-
մենից շատ այն հայացքներին դէմ, որ յայտնած
եմ գրքիս XI, XII, XIII գլուխներում՝ էջմիածնայ.
Սինօղի 1904 թ. հոկտ. 4-ի կարգադրութեան
առթով—ամուսնացող տղամարդկանցից նախ քան
պսակը, բժշկական վկայական պահանջելու նրանց
առողջութեան մասին՝ յատկապէս վեներական
ախտերի նկատմամբ:

Դօկտ. Տաղաւարեան ի շարս այլ առարկու-
թեանց մատնացոյց է անում իւր նախկին մի
աշխատութեան վրայ, որ, ըստ իս, շատ շահեկան
մի հրատարակութիւն է*, ուր «Ամուսնութիւն
և ամուսնոց ընտրութիւն» գլխում, յիշելով Սպէն-

*) «Ծննդական գործարանի կազմախօսութիւն,
բնախօսութիւն, առողջաբանութիւն» վերնագրով, Պօլիս.
1899 թ.

գեր փիլիսոփայի խօսքերը թէ՛ «Ժամանակակից ազգերը աւելի կխորհին խոգերի սերունդը բազմացնել և ազնւացնել, քան թէ մարդկային սերունդը», հեղինակը ասում է՝ «ամուսնացողները պարտաւորութիւններ կստանան զէպ իրենց ամուսինը և սերունդը՝ իրենց առողջութիւնով ուստի արգիլելու է ժառանգութեամբ փոխանցելի հիւանդութեան ենթարկելուց ամուսնութիւնը»։ Սրան աւելացնում է՝ «Ամուսնութեան քանտի-տատներէն իրենց առողջութեան մասին բժշկական վկայագիր՝ պահանջելու է քաղաքապետութիւնը (ընդգծումը իմն է) և ըստ այնմ տալու է ամուսնութեան հրամանագիրը»։ Այս հեղինակը ուրեմն բժշկական վկայականի կողմն է, միայն մարմնաւոր իշխանութեան պահանջով։

Դօկտ. Փաշայեանը, նոյնպէս ցոյց տալով զանազան կտորներ (եր. 383 – 387, 419 – 420) իւր «Ընդարձակ դպրոցական առողջապահութեան» մէջ, գրքիս նիւթին վերաբերեալ և հաստատող իմ կարծիքները, կասեալ թէ՛ վերը յիշած հարցի նկատմամբ չէզոք դիրք է ուզում բռնել։ Ահա նրա նամակի խօսքերը՝

«Ձեր հեղինակութիւնը իսկապէս նորութիւն է ոչ միայն հայերիս, այլ և Ներսիսյանի համար։ Ձեր այդ գրքի առթիւ լոյս տեսած քննադատականները կարդացի «Մշակի» մէջ։ Պարզ է, որ վիճելի կէտերը վերաբերում են իսկապէս վիճելի խնդիրներին, որոնց մասին հեղինակների կարծիքները տարբեր են, և դուք իրաւունք ունէիք

ընդունելու մի կողմի դադափարները և մերժելու միւս կողմինները»։

Այս տեսակէտով ի գուր իմ շատ յարգելի բարեկամ բժ. Աղասարեանցը իւր երկու քննադատականներում զանազան հեղինակութիւններ է թւում որոնք բժշկական վկայական պահանջելու կողմն են։

Այս ամենը ապացոյց է նորա (Աղասարեանի) «Էրուդիցիային», ուսումնատենչութեան, որ արդարև օրինակելի է։

Սակայն մի քանի անհատական կարծիքների և պատահական փորձերի հիման վրայ, (ինչպէս օրինակ բերած բժ. Աղ. Ղազարեանցի և բժ. Գ. Կաճկաճեանի փորձը), անկարելի է այդ ծանր խնդիրը լուծել։ Ես գրքումս բերած եմ աւելի հեղինակաւոր անձանց և հաստատութիւնների կարծիքները յօգուտ այդ հարցի դրական վճռումի, նկարագրած եմ մանրամասնօրէն մի մեծ շարժումն այդ նպատակով Ներսիսյանի մտաւորական դասերում։ Չնայած այս ամենին, ասում եմ գրքումս, ոչ մի քաղաքակիրթ երկրում բանը օրէնսդրութիւն սահմանելուն չը հասու, ոչ աշխարհական և ոչ հոգևոր իշխանութեան կողմից։ Ուսումնասիրելով աւելի խորը այս բացասական հետեանքի պատճառը, ես բերում եմ այն հեղինակութիւնները, որոնք ցոյց են տալիս թէ՛ որպիսի բարդութիւններ, անպատեհութիւններ և նոյն իսկ ողբերգական դէպքեր կարող են ծագել մարդկանց կեանքում, եթէ ստիպողական օրէնքա-

դրութեամբ բժշկական վկայական պահանջել
ամուսնութեան փափուկ գործում. և զալիս եմ
այս եզրակացութեան՝ «Եթէ հիմնովին այդ ամենը
քննենք, կտեսնենք, որ այնքան էլ փրկարար և
յաջող չի կարելի համարել այդ կնճռոտ խնդրի
Գօրդեան հանգոյցը բժշկական վկայականի բուժ
հարւածով լուծելը»:

Պարզ է, որ խնդիրը գիտութեան մէջ, իրաւի,
դեռ վիճելի լինելով, պետութիւնների մեծամասն-
ութիւնը և ամբողջ աշխարհի հոգևորականու-
թիւնը անհնար են համարում բժշկական վկայական
սահմանելը: Այստեղ «մեծամասնութիւն» խօսքը
գործ դնելով, ես ընդունում եմ բժ. Ազատարեանցի
և դօկտ. Տադաւարեանի և այլոց ցուցումները
Նօրվեզիայի և Ամերիկայի Քօննէքթիքիւթ և
Վաշինգտօն նահանգների մասին, ուր տեղական
աշխարհական վարչութիւնները սահմանած են
օրէնք՝ ամուսնացողներից բժշկական վկայական
պահանջելու առողջութեան մասին: Բայց
այս մի քանի բացառութիւնները դեռ չեն հեր-
քում պետութիւնների մեծամասնութեան և բոլոր
եկեղեցիների ձեռնպահութիւնը: Այս ձեռնպահու-
թեան պատճառները ես մի առ մի թւած եմ
գրքումս, մանաւանդ որ՝ դեռ ապացուցւած չեն
նոր օրէնսդրութեան հետեանքները և օգուտները
այն բացառիկ տեղերում և միւսնոյն ժամանակ
հարկէ զգուշանալ՝ օրէնսդրական բռնի միջոցներով
չափազանց սահմանափակել անհատական ազա-
տութեան և անձնական պատասխանատւութեան

սկզբունքները մարդկային փափուկ բնագոյական
պահանջներում, ուր գլխաւորապէս պէտք է գոր-
ծադրւին բարոյական և համոզական միջոցներ:

Եթէ այդ ամենին աւելացնենք մեր Սինօդի
կարգադրութեան աղաղակող և ակնյայտի թե-
րութիւնները, որոնք մի առ մի յիշւած են գրքումս
և որոնց մասին տարաձայնութիւն չկայ իմ և
ընդդիմախօսներիս մէջ, — հետեաբար այդ երկու
կէտերով մեր մէջ վիճաբանութիւնը փակւած
պիտի համարէինք. այսինքն թէ՛ Էջմիածնի հո-
գևոր Սինօդը իւր ձեռնհասութիւնից վեր պիտի
համարէր վերջնական լուծումն տալու՝ իրաւա-
բանութեան և բժշկականութեան մէջ դեռ ևս
վիճելի և կնճռոտ համարւած մի խնդրի: Երբ մի
անգամ նա հապճեպով օրէնսդրութիւն հրատա-
րակել է այդ խնդրին վերաբերեալ, բնականաբար
դա պէտք է համարւէր ժամանակաւոր փորձ մի
սահմանափակ շրջանում:

Յայտնի է թէ Հաշտարխանի թեմի նախկին
առաջնորդ հանգուցեալ Արիստակէս արհիմ Սեդ-
րակեանց, որ խորհրդակցութեամբ Վ. Արծրունի,
Բուդուղեանց, Զաքարեանց, Քաթանեանց բժիշկ-
ների, համարւում է նախապատճառ (ինիցիատօր)
Սինօդական այդ կանոնի, իւրեան յատուկ զգու-
շութիւնով խնդրել էր Էջմիածնի Սինօդին բժշ-
կական վկայականի պահանջը սկզբում միայն
իւր թեմի համար պարտաւորական անելու. Սի-
նօդը այդպէս էլ պիտի վարւէր, մինչև որ ապա-
զայ վիճակագրութիւնը ցոյց տար թէ՛ կարող է

արդեօք այդ կարգադրութիւնը Հայաստանեայց եկեղեցու ընդհանուր կանոն դառնալ:

Այստեղ փարենտազի մէջ պէտք է բերեմ մի փաստ ևս Սինոդի կարգադրութեան հապճեպ և թերի կատարելուն, որ կարելի է յաւելած համարել իմ գրքիս, ուր այդ փաստը չէ յիշած: 1904 թ. նոյեմբերի 3-ին հրատարակած Սինոդի կարգադրութիւնից յետոյ վեներական ախտերի նկատմամբ, Թիֆլիզի Սրբազան առաջնորդը, Գարեգին արքեպիսկոպոս Սաթունեան, գուցէ դրդած բարի նախանձով դէպ իւր կարգակից Հաշտարխանի առաջնորդը, դիմում է Սինոդին պատճառաբանեալ առաջարկութեամբ, որ բժշկական վկայութեան ենթարկւին նախ քան պսակը՝ նաև կրկնամուսնութեան ձգտող այրի կանայք, որ պահանջի խօսեցեալներից վկայական նաև բարակացաւ—**թ ո ք ա խ տ չ ու ն ե ն ա լ ն եր ու մ ա ս ի ն**, իսկ ամուսնական յարաբերութեան համար **Փ ի զ ի ք ա կ ա ն կ ա ը ո ղ ու թ իւ ն ու ն ե ն ա լ ն եր ու մ ա ս ի ն**»:

Այս նոր առաջարկութեան հիման վրայ մեր Սրբազնագոյն Սինոդը, վերջի կէտը ջնջելով, երևի թէ՛ համարելով այդ չափազանց միջամտութիւն հոգևորի կողմից անհատական ազատութեան և բժշկական անլուծելի խնդիրների մէջ,—հրատարակում է նոյն տարւայ նոյեմբերի 29-ին նոր «ուկազ» կամ հրաման, որ ամուսնացողներից բժշկական վկայական պահանջի, ոչ միայն վատցաւ, այլ և բարակացաւ—**թ ո ք ա խ տ չ ու ն ե ն ա լ ն եր ու**

մասին. այրի կանանցից էլ ի դէպս կրկնամուսնութեան վկայական պահանջել այդ երկու ախտերից գերծ լինելու մասին:


Ի դէպ այստեղ հարց տանք. այս նոր փոփոխութիւնով Սինոդը միթէ լրացուց իւր կանոնի թերութիւնները.—Ամենևին ոչ. Թէ իմ գրքումս և թէ մեր բոլոր բժիշկների կարծիքով, եթէ ընդունւի սկզբունքով, բժշկական վկայական պահանջելը, պէտքէ ուրեմն ինկատ առնւի՝ և՛ գինեմոլութիւնը, և՛ ընկնաւորութիւնը, և ջղային ու հոգեկան ծանր հիւանդութիւնները և բորոտութիւնը, և՛ սեռական գործողութեան անկարողութիւնը (փեսացուի, և հարսնացուի). այսքանը դեռ առնուազն... Որովհետև կան բժիշկներ, որ ժառանգաբար փոխանցող ուրիշ տկարութիւնների մասին էլ խօսք են անում, ինչպէս է պարբերական շնչարգելութիւնը, արթրիտիզմը և այլն: Ես ներկայ եմ եղած անցեալ և նախանցեալ տարիներ Պարիզի բժշկական ընկ. այն նիստերին, ուր այդ տեսակ պահանջներ էին դրած և դրանց մասին երկար ու բարակ վիճաբանութիւններ էին լինում, և մինչև օրս էլ դեռ վերջնական եզրակացութեան չէ եկած յիշեալ համբաւաւոր Société de médecine de Paris. Նոյն այդ մանրամասնութիւնների մասին դեռ երկար պիտի խորհրդածէ և տեղիս կայս. Կովկ. բժշկ. ընկ.-ը, մանաւանդ նրա մեծ յանձնաժողովը (մեր Սինոդի կանոնի իբր բարեփոխութեան համար ընտրւած), որ ահա մի տարի աշխատում է և դեռ վերջնա-

կան եզրակացութիւններ չէ հասած ... Արդ, պէտք է նորից հարց տանք մեր էջմիածնի Սինօզին, որ իրան թոյլ է տւել ոտք դնել մի այդպիսի կնճռոտ բժշկական հողի վերայ, քանի՜ քանի՜ անգամ դեռ պիտի փոխէ իւր կարգադրութիւնը այդ հարցի մասին:

Եւ միթէ առաւել խոհեմ և շրջահայեաց չէր լինի, եթէ սպասէր, որ բժիշկները դեռ իրանք համաձայնութեան և մի եզրակացութեան գային՝ հիւանդութիւնների տեսակի, աստիճանի մասին և ինչ կերպ վկայական ապրու ձևի մասին, ապա դրա համեմատ հիմնաւոր օրէնսդրութիւն մշակելու մասին մտածէր:

Վերջացնելով փարենտազս և դալով մեր վիճաբանութեան ըստ երևութի փակած համարւելուն, ես իրաւունք ունէի կարծելու, թէ բժշկական վկայականի համակրող իմ արւեստակիցները գոհ պիտի մնային վերը յիշածս երեք գլուխների ընդհանուր եզրակացութիւններիցս, որ անհ. «Բերածս քննադատութիւններով ես չեմ ուզում ասել, թէ էջմիածնի Սինօզի կարգադրութիւնը փաստեր է եղած, ընդհակառակը՝ նա օգտակար եղաւ նրանով, որ նորից գարթեցրեց և արծարծեց ժողովրդի մէջ մի կարևոր հասարակական առողջաբանական հարց: Եւ ըստ իս դրանով էլ վերջանում է նրա գերը: ... Այդ չափով միայն պիտի գնահատենք մեր Սինօզի կարգադրութիւնը և ոչ թէ մի տեսակ հայկական շօվինիզմով կոչում անենք բոլոր միւս ազգերի հոգեբանականութեան՝

հետեւել հայոց հոգևոր իշխանութեան օրինակին, որ իբր թէ գտած է վերջապէս փրկարար միջոցը*:



Հիմի տեսէք, որ իմ միւս շատ յարգելի բարեկամս՝ դօկտ. Վահան Արծրունի, իւր գրախօսականում այդ իմ ընդհանուր եզրակացութիւնից, մանաւանդ իմ վերջին պարբերութիւնից դժգոհ է: Նա չի կարող թոյլ տալ, որ այդքան փոքր նշանակութիւն տրւի՝ իւր և իւր մի քանի ընկերակիցների համակրութեամբ մտցրած այդ մեր «եկեղեցական կանոնին», որ նրանց կարծիքով, ինքն ըստ ինքեան «գիտութեան մի բարիք է», «փրկարար» միջոց է, որով կարող է ամեն հայ պարծենալ այսպիսի մի «առաջադէմ» կանոն իւր եկեղեցու մէջ ունենալու համար: Ուստի յորդորում է ինձ՝ այդ առաջադիմական քայլը յետ չմղել և չքարոզել մի յետադիմական սկզբունք, հոգևոր իշխանութեան իրաւասութեան մասին: Այս կարծիքին է և բժ. Աղասարեանցը:

Այս ամենը քստիպում է ինձ առաւել ուշիմ

//

*) Այս էտողերով ես ակնարկում եմ յարգելի Կօլլեգա Ն. Դ. Սատիսեանի հրապարակական ճառին, որ նա արտասանած է ռուսերէն 1905 թ. ապրիլին Կայս. Կովկ. բժշկական ընկերութեան տարեդարձի հանդիսին:

քննութեան ենթարկել իմ յարգելի ընդիմախօսներին հիմնական մտքերը, վճռելու համար մի շատ կարևոր սկզբունքային հարց, թէ ռոն է այդ խնդրում, մեր հայերիս կեանքի ներկայ հանգամանքներում առաջադիմութիւնը և ռոն է յետադիմութիւնը:

Ուստի պէտք է խնդրեմ Ձեր համբերութիւնը, լսելու մեր վիճաբանութեան ստիպեալ շարունակութիւնը:

Դօկտ. Վահան Արծրունին իւր գրախօսականում, շատ ճիշտ ասում է թէ, «սիֆիլիստը վերջին ժամանակներս մեծ քայլեր է անում մեր ժողովրդի մէջ, նա վարակում է հայ աւանդական անբիծ օճաղը. (ընդգծումը իմն է) վատասեռում է քաղաքաբնակ նոր սերունդը և սպառնում է ողողել մեր գիւղական ազգաբնակչութիւնը», և ես լիակատար համամիտ եմ նրան, որ պէտք է այդ աղէտի դէմ ամեն կերպ մաքառել: Սակայն ի՞նչ միջոցով, ահա այստեղ է մեր կարծիքների տարբերութիւնը:

Նա և նրա համամիտները, ինչպէս վերը տեսանք, մի շատ փրկարար և առաջադիմական միջոց համարում են ամուսնացողներից բժշկական վկայական պահանջելը:

Ա) Այս կէտը դնենք ուրեմն իբրև առաջին նիւթ մեր նոր քննադատութեան և հարց տանք. ի՞նչ տեղից է ծագել մեր բժիշկների գլխում զարմանալի հաւատ բժշկական վկայականի փրկարարութեան, քանի որ ամուսնութեան դէպ-

քերում այդպիսի վկայականի փորձ չէր եղել. քանի որ Նորվեգիայում և Ամերիկայի մի քանի համայնքներում այդ միջոցի գործադրութիւնը և հետևանքները վիճակագրւած չէին և մեր այդ բժիշկներին յայտնի չէին:

Հաւանականաբար այդ հաւատը ծագել է պետութիւնների սիֆիլիստի դէմ մաքառելու մի եղանակից, որ շատ անհղիւստ ընդունւած է իբրև փրկարար միջոց և մի ժամանակ դրանով առատակայարմարութիւնը համարւում էր առողջապահական մի անվիճելի ճշմարտութիւն: Սյոէ՝ Նապալէօն I օրերից Եւրոպական օրէնսդրութիւնների մէջ մուտ գործած կարգը՝ հասարակական տէմպերամենտի զոհ կանանց պարբերաբար բժշկական վկայութեան ենթարկելը, որով կարծում էին թէ վեներական ախտերի տարածման առջև զօրեղապէս կ'առնւի: Ով այդ ախտերի մասին մի գրեթէ հրատարակւած էր, այդ միջոցը ցոյց էր տալիս իբրև անվիճելի: Անցեալները ձեռք ընկաւ հանգուցեալ բժշկապետ Դիլզ. Քոչարեանցի հրատարակութիւնը 1881 թւին, այդ ախտերի մասին: Դուրս է գալիս, որ հայ բժիշկներից առաջինը դա է եղել, որ առաջարկել է պահանջեալ ամուսնացողներից վկայական չիշլած ախտերի նկատմամբ, ինչպէս պետութիւնը քաղաքակրթ. երկիրներում այդ միջոցը գործ է դնում կապաճելի կանանց դէմ:

Հիմի տեսնենք այդ Նապոլէօնական հաստատութեանց հետևանքները: Վերջի տասնեակ

տարիներ ի հետագոտութիւնները և վիճակագրութիւնները զանազան տեղերում ապացուցում են, որ այդ բարդ հաստատութիւնները, ու է գլխամեծ տացի մի ամբողջ կազմակերպութիւն, բաւական շատ բժիշկներով և ոստիկանական կազմով, ամենակն չեն արգելում վեներական ախտերի տարածումը: Մանաւանդ ժընեվի (Սիֆիլիսի դէմ մաքաւման վիճակագրութեան) կեդրոնական բիւրօի հրատարակութիւնները ցոյց են տալիս, որ վեներական ախտերը աւելի շատ չեն տարածւած այն տեղերում, ուր բժշկական ստիպողական հսկողութիւն չէ ընդունւած (ինչպէս Զւեցարիալի մի քանի կանտօններում) քան թէ այն տեղերում, ուր այդ կարգը ընդունւած է և խիստ գործադրւում է (ինչպէս օրինակ՝ Ֆրանսիայում): Ուրեմն կարելի է եզրակացնել, թէ այդպիսի ստիպողական հսկողութիւնը անօգուտ է սեռական յարաբերութեանց փափուկ գործում, նպատակի չի հասնում և մի և նոյն ժամանակ փնասաբեր է դառնում, որովհետեւ ստեղծւում է մի խաբուսիկ ապահովութիւն չվարակելու և տղամարդիկ այդ պատճառով աւելի սակաւ զգուշութիւններ են գործ դնում, աւելի վստահ տրւում են անառակութեան: Այս է պատճառը, որ վերջի տարիները, սկսած եռանդուն տիկին Ժօզֆինա Բուսլեից՝ շատ հասարակական գործիչներ և բժիշկներ, զանազան միութիւններ կազմելով աշխատում են ոչնչացնել ոչ միայն այսպէս կոչւած «համբերւած տները», որ նրանց

կարծիքով բոլորովին համբերելու և թոյլատրելու չեն, այլ և վերացնել իսպառ բժշկական հսկողութիւնը, իբրեւ մի խաբուսիկ միջոց և միևնոյն ժամանակ մարդկային արժանաւորութեան վերջի մնացորդներն իսկ անկեալ կանանց մէջ ոչնչացնող: Այս պայքար վարողները կոչւում են, ինչպէս լատինացիներ, աբօլիւցիօնիստներ, (abolition տապալում—խօսքից), սրանց շարքին օրէցօր աւելանում են համբաււոր բժիշկներ և նորանոր առաջադիմական հասարակական գործիչներ:

Այս նմանութիւնը (անալօգիան) բերելով, եւ իրաւունք ունիմ ասելու իմ ընդդիմախօսներին, թէ ամուսնութեան փափուկ գործում, պահանջելով նոյն տեսակ ստիպողական՝ այն էլ ամեն մի պատահական բժշկի վկայութիւն, դուք ոչ թէ իրկարար, առաջադիմական միջոց էք առաջարկում, այլ բիւրօկրատ անկենդան ձեւականութեան և մի յետադիմական սիստեմ էք ստեղծում, որ թէ խաբուսիկ է և թէ անթիւթիւրիմացութիւնների տեղիք աւող:

Լսենք այստեղ Հ. Մեսրոպ աւ. ք. Մելեանին, թէ այս 5 տարւայ ընթացքում ի՞նչ հետեանքներ է տւել բժշկական վկայական պահանջելը Բաթումում (տ. «Մշակ» № 54): Շատ պէտք է փաստալ, որ հ. Մելեանի ինձ խոստացած վիճագրական տեղեկութիւնները այրւել են անակնկալ պատճառներով, սակայն նրա ընդհանուր դիտողութիւնները իւր յիշողութիւններից դարձեալ շատ քան են պարզում: Հ. Մելեանը յայտնում է թէ՛

բժշկ. վկայական ամուսնացողներից նա պահանջում է ամենայն ճշտութեամբ, այն էլ թէ տղայի և թէ աղջկայ (ի՞նչ...) կողմից: «Սակայն այսքան տարիների ընթացքում, նա գրում է, դեռ չէ պատահել մի օրինակ, որ որ և է մէկը խօսեցեալներից, բժշկի կողմից արգելքի հանդիպի: Բայց շատ է պատահել, որ նորապսակներից վաղաժամ գերեզման իջնեն իբրև թոքախտաւորներ, իբրև հին հիւանդներ»: Ուրեմն բժշկական վկայականը մի բիւրօկրատական ձև է դառել, որ այս կամ այն գումարով, ամեն ամուսնացող ձեռք է բերում դրան, այս կամ պատահական բժշկից:

Այսպիսի վկայականներով վատ ցաւի և այլ տարափոխիկ հիւանդութիւնների տարածումը չի պակասիլ: Անցեալները ինձ պատմում էր այդ խնդրի վերաբերեալ քստմնելի դէպքեր Ախալցխայի կեանքից տեղի աւ. ք. Տէր-Աբրահամ Ղազարեանցը: Սա ստիպւած է եղել այդ դէպքերի վրայ հրաւիրել վկայական տուող բժշկի ուշադրութիւնը, և պատասխան է ստացել բժշկից թէ՛ «ի՞նչպէս վկայական չտաս, երբ րեօլերը վրէժ բռնած՝ պահանջում է շտապով վկայականը պատրաստել լիակատար առողջութեան մասին...»: Շատ կ'երկարէր, եթէ իմ լսած բոլոր մանրամասնութիւնները ես այստեղ յիշեմ: Սակայն այդ ամենի եզրակացութիւնն այն է թէ մասնաւոր բժիշկներից առողջութեան վկայական վերցնելը, ոչ միայն մի ձևականութիւն է դարձել, սակաւ բացառութիւններով, և ժողովրդի վրայ մի նոր դրամական

հարկ է բարդել, (քանի որ բժիշկները պարտաւոր չեն ձրի վկայական տալու ամեն ուզողի) այլ և աչք կապող է, քանի որ ծնողները դրա պատճառով այլ ևս չեն հետևում աւանդական իրանց կարգերին, ինչպէս առաջ հետամուտ էին լինում իրենց ապագայ փեսայի կամ հարսի առողջութեանը. քահանաներն էլ այդ նոր կանոնով սխալմամբ կարծում են, թէ այլ ևս իրանց վրայից վերցւած է իրանց դարաւոր իրաւունքը և պարտքը նորապսակների առողջութեանը հսկելու, իբր թէ դա միայն և միայն բժիշկների գործ է:

Բ) «Այստեղ ես դնում եմ վերջակէտ բժշկական վկայականի փրկարար լինելու հարցին: Մենք հասանք մեր վիճաբանութեան երկրորդ հիմնաւոր կէտին, այն է՝ եկեղեցական և բժշկական դասի իրաւասութեան սահմանները որոշելուն պսակի գործում: Սա մի սկզբունքային հարց է: Քանի որ Ս. Սինօդը համեմատութեան չէ դնում քաղաքացիական պսակը և եկեղեցական պսակը, այլ՝ ընդունում է ամուսնութիւնը իբրև եկեղեցու խորհուրդներից մէկը—ապա ուրեմն հարց է ծագում Սինօդի նոր կանոնով—ո՞ր դասին պիտի պատկանի մի հայ հաւատացեալ զոյգի պսակման կամ արգելման վերջնական վճիռը, հոգևորական դասին, չէ՞ բժշկական դասին:

Իմ յարգելի ընդդիմախօսները ասում են թէ՛ այդ իրաւունքը պէտք է պատկանի միայն բժիշկներին, քանի որ ամուսնութեան գլխաւոր պայմանը առողջութիւնն է, իսկ առողջութիւնը կա-

բող է որոշել միայն բժշկը. քահանան պէտք է կուրորէն ընդունէ բժշկի եզրակացութիւնը և կուրորէն հետևի նրան: Ահա դօկտ. Արծրունու իւր խօսքերը. «...Ձէ կարելի համաձայնել, որ քահանան պսակողի առողջական դրութեան մասին որոշումներ տայ և արգիլէ կամ ոչ՝ պսակը» (ընդգծումը իմս է.) «Ես կարծում եմ, ասում է նա, որ քահանաներին այդպիսի մի լիազօրութիւն տալը վտանգաւոր բան է և թիւրիմացութիւնների ու անբարեխղճութեան (ընդգծումը իմս է) ասպարէզ կբանայ»: Ուրեմն՝ ըստ դօկտ. Արծրունու այսուհետև ամեն հայ զոյգի պսակը, կամ պսակի արգելքը կախում պիտի ունենայ միմիայն այս կամ այն պատահական բժշկի վկայականից: Իսկ բժ. Աղասարեանցը, նոյնպէս պահանջելով զօրի հաւասարացնել այդ հարցում հոգևոր դասի դերը, այնուամենայնիւ չէ վճռում, մի պատահական բժշկի վկայականին այդպիսի մեծ իրաւասութիւն տալ, այլ՝ պահանջում է ամեն տեղ կազմակերպել, ուր կանոնը պիտի գործադրւի, այդ գործի համար յատուկ բժշկական համաժողով, կամ բժշկական խորհուրդ (կօնսիլիում) բաղկացած գոնեա երեք մասնագէտից. (տէրապեւտ, սիֆիլօլոգ և խիրուրգ), սրանց վկայականով պիտի ղեկավարւին քահանաները պսակելու կամ չպսակելու խնդրում:

Ուրեմն՝ ըստ բժ. Աղասարեանցի էլ, Սինօգի թելադրած կարգով, մասնաւոր բժշկից վկայական

բերելը նոյնպէս թիւրիմացութիւնների և անբարեխղճութեան ասպարէզ կարող է բանալ. ուստի նա կարևոր է համարում այդպիսի վկայական ձեռք բերել յատկապէս կազմակերպած բժշկական խորհուրդներից: Ասել է թէ՝ բժշկական վկայականի համակիրները դեռ իրանք համաձայնութեան չեն եկած՝ բժշկական վկայականը ի՞նչ ձեռնհաս մարմնից ստանալու մասին:

Այս կամ այն պատահական բժշկից վկայական բերելու թերութիւնների շարքում մոռացած եմ գրքումս յիշել մի հանգամանք, որի վրայ ուշադրութիւն դարձրել է անցեալ տարիների «Աղբիւր — Տարագի Առողջապահ» յաւելածներում տեղիւ յարգելի բժ. Արսաւ. Շխեանցը. այն է թէ վարակած ախտաւորը, որ յանդգնում է ամուսնութեան մտնել, նա կանգ չի առնիլ խաբեբայութեան առաջ և ինքը հիւանդ—հիւանդ չի դնայ բժշկի մօտ կամ բժշկական խորհրդի ատեանին, այլ՝ կուղարկէ իւր անւան և անձի վաւերաթղթով մի բոլորովին առողջ անձն, որը կբերէ և վկայականը կյանձնէ խաբեբային: Բժ. Շխեանցը իւրեան դիմող ամեն խօսեցեալից, որ վկայական է խնդրում, պահանջում է ծխատէր քահանայի վկայութիւնը նորա անձնաւորութեան մասին: Ըստ իս, դժբախդաբար այդ էլ չի օգնիլ. որովհետև ծխատէր քահանայի վկայութիւնն էլ կարելի է տալ ուրիշ մարդու ձեռք և ուղարկել բժշկի մօտ կամ բժշկական ատեան, և սրանք մեծ դժւարութիւններով միայն կարող են հաստատն

իմանալ...

Վերջապէս՝ եթէ պսակի ժամանակ բժշկական վկայականը փրկարար միջոց համարել սիֆիլիսի տարածման դէմ, ապա ուրեմն՝ պսակից յետոյ էլ պէտք է անդադար բժշկական վկայութեան ենթարկել ամուսիններին, քանի որ յայտնի է թէ՛ սիֆիլիսի տուժ վարակելը տեղի է ունենում շատ անգամ առողջ ամուսնութիւնից յետոյ, իբրեւ հետեանք անդուստ ամուսինների պոռնիկութեան: Ասել է թէ առանց բժշկական «կօնորմարկի» ոչ մի անգամ ամուսնական յարաբերութիւն թոյլ տալու չէ՝ ... Ահա թէ ինչպիսի անհեթեթութիւնների հետևաբար հասցնում է բժշկական վկայականի փրկարար ութեան «գօկտրինը»:

Այս տողերը գրելիս ձեռքս հասան «Բիւզանդիոն» լրագրի մարտ ամսի 17-ի և 18-ի համարները, ուր վաղուցւայ բարեկամս, այժմ Պօլսի բժշկական վարժարանի պրօֆեսսօր, Էդինբուրգի բժշկ. ֆակիւլտէի դօկտօր Բազիլը, գրքիս արժանիքը և թերութիւնները ցոյց տալուց յետոյ՝ ահա թէ ինչ է գրում բժշկական վկայականի խնդրի մասին (Ափսոս, որ դօկտ. Բազիլի յօդուածները, ըստ նորա նամակի, խմբագրական աղաւաղումներով են տպագրւած):

«Ամուսնութենէն առաջ բժշկական վկայագիր պահանջելն... գործնական օրէնք չէ հայոց եկեղեցւոյ համար: Մեր մեծամասնութիւնը՝ Տաճկաստանի, Պարսկաստանի, Հնդկաստանի,

Եգիպտոսի, Եւրոպայի և Ամերիկայի մէջ՝ չի կրնար և չպիտի հնազանդի այսպիսի կանոնին»: «Մշակ» լրագրի մէջ երեցած գրքիս քնննադատութեանց դէմ յարգելի արուեստակիցս ասում է՝

«Թողլով միւս կարևոր հիւանդութիւնները, ուր վճռական կտրուկ վկայական գրելը միշտ կարելի գործ չէ, նոյն իսկ սիֆիլիսի համար ամեն դէպքի մէջ կարելի չէ անսխալ մնալ, ոչ միայն ժամանակաւոր քննութենէ վերջ, այլ նոյն իսկ այնպիսի հիւանդների մասին, որ երկար տարիներէ ի վեր մեր հակողութեան ներքեւ են: Դէպքեր գիտեմ, որ 10 տարի առ երեսուս առողջ ըլլալէ վերջ, ախտաւոր 4-րդ և 5-րդ դասակ ունեցած է»:

Սիֆիլիսի ճանաչելու վաստեմանեան մեթօդը գրքիս մէջ չի շփուր, արդարացի կերպով պատահական կօլեգաս վերագրում է այն բանին, որ ես ամենուրեք դիւրութեամբ գործադրելի չեմ համարում այդ նոր մեթօդը, չիսօսելով այն հանգամանքի մասին, թէ այդ մեթօդը անփորձ բժիշկների կամ դեղագործների ձեռքով կատարւած, ճիշդն սխալների տեղիք կարող է տալ... Դօկտ. Բազիլը ի վերջոյ նկատում է թէ մեր Սինօղի նոր կանոնը իւր նպատակին չի հասնի. «Քանի որ անխիղճ մարդուն, որ իւր հիւանդութեան հետեանքից ամուսնութեան մէջ չի սարսափում, կանոնադրութեամբ չի կարելի զսպել, այն էլ եկեղեցական օրէնքի անուանով»:

Ես կաւելացնեմ՝ այդպիսի հրէշային յանցա-
գործներին պէտք է յիշեցնել մեր ուսական
օրէնսդրութեան քրէական բաժնի յայտնի 103 և
854-րդ յօդաւանդները, ուր որոշ պատիժներ են
սահմանուած անմեղ կոյսեր և մայրեր վարակող
Դօն-Ժուաններին դէմ:

Զընդունելով բժշկական վկայականը փրկա-
րար միջոց, ես ասում եմ գրքումս թէ. «Սիֆի-
լախի և միւս այդ տեսակ հիւանդութեանց
բարդ ու դաժան չարիքի դէմ հիմնաւոր և լուրջ
կերպով մաքառելու համար, առաջնակարգ դերը
պիտի տրւի ժողովրդի տնտեսական և մտաւոր
զարգացմանը, կենսակրթական միջոցների և ա-
ռողջապահական գիտութիւնների տարածմանը
ժողովրդի լայն խաւերում» (եր. 56)*: Սրան
աւելացնում եմ թէ՝ մեծ դեր ունի կատարելու
այդ գործում և մեր Հոգևոր բարձր իշխանու-
թիւնը իւր քահանայական ստւար և մեծաքանակ
դասով:

*) Սիֆիլախի տնկատմամբ վերջի տարիների
երեք գիւտը, կարելի է ասել, նոր դարագլուխ կազմե-
ցին՝ այդ սոսկալի ախտի դէմ փրկարար կերպով մա-
քառելու. առաջին գիւտը մեղ տուեց գերմանացի կեն-
դանաբան Շաուդիցնը, որ գտաւ միջոց սիֆիլախի
մանրէները (*Spirocheta pallida*) ճանաչելու և ուսումնա-
սիրելու: Երկրորդ գիւտն անողն է գերմանացի ման-
րէաբան՝ Վասսերման, որի մեթոդով կարելի եղաւ
ճանաչել հիւանդի արեան մէջ սիֆիլախի գոյութիւնը
նոյն իսկ այն հնացած դէպքերում, ուր արտաքին նշան

«Բայց ի՞նչ ենք տեսնում մեր այժմեան
կեանքում. կիսապուշտ, ընկնաւորը, (էպիլեպ-
սիա)

հիւանդութեան չէր մնացած: Երրորդ՝ նորագոյն գիւտի
համար մենք պարտական ենք հանձարաւոր մանրէա-
բան Էնրիխին և նորա աշակերտ ճապոնացի Հասա-
ին, որոնք գտնան վերջապէս սիֆիլախի իսկական
ճարը կամ դեղը, այն է՝ համառօտ կոչումով՝ ալ-
սենո—բենզօլը կամ «606»-ը. այս դեղի լուծւածի
մի կամ երկու ներարկումը մորթու տակ կամ սև երակի
մէջ՝ շուտով մաքրում և բժշկում է բոլոր ծանր
հիւանդական երևոյթները: Այս մասին այլ ևս կասկած
չկայ, քանի որ հազարաւոր սիֆիլախոտացեալների վրայ
և ամենուրեք կատարւած փորձերը զարմանալի յաջող
հետեանքներ տուին հրաշալի բուժման: Փոքր ինչ կաս-
կածելի է դեռ մի բան՝ հիւանդութիւնը իսպառ արդեօք
վերջանում է թէ՞ առանց նոր վարակումի կարող է
այս կամ այն ժամանակից յետոյ նորոգւել: Մեծ յոյս
կայ որ շուտով այդ կասկածն էլ կվերանայ: Այն ժա-
մանակ մեր Հոգևոր իշխանութեանը կմայ՝ պատուիրել
շրջաբերականով իւր քահանաներին, որ խորհուրդ տան
խօսեցեալներին (երբ գիտենան կամ խոստովանու-
թեան միջոցով իմանան սիֆիլախտ երբ և իցէ ունե-
նալը) նախ քան պսակւելը դիմել բժշկին գէթ մի
երկու անգամ սրսկելու «606» դեղը և այդ մասին տե-
ղեկութիւն բերել բժշկից առանց ձեական վկայականի:
Պրօֆ. Էնրիխը իւր դեղը նւիրեց մարդկութեանը
անշահասիրաբար առանց «մօնօպօլ»ի. ուրեմն կարճ
ժամանակում յետին գիւղացին էլ, որ բանւորութեամբ
քաղաք գնացած՝ դժբաղդութիւն ունենայ հիւանդա-
նալու, պիտի կարողանայ այդ փրկարար դեղի բարիքը
վայելել:

Ծան. հեղ.

տիկը) վեներոտը, սիֆիլիսոտը, թոքախտաւորը, գինեմոլը, երբ կամենան պատկել՝ ամենեին արգելքի չեն հանդիպիլ քահանայի կողմից: Այս դատապարտելի զանցառութիւնը, ասում եմ, ուզում են արգարացնել այժմս նրանով թէ՛ հիւանդութիւնները մարմնական հանգամանք են, բժշկի վերաբերեալ բան են և ոչ թէ՛ հոգևոր պաշտօնէի»: Այդ մասին ահա թէ ես ի՞նչ եմ գրած (եր. 54) «մեր գիւղերում... ուր բժշկի երես հազիւ են տեսնում, քահանաներն են ամենից առաջ տեղեակ լինում այս կամ այն ծխականի յարատե հիւանդութիւն ունենալուն: Նրանք՝ որ բժշկին վերաբերեալ մանրամասնութիւններ (այս խօսքը ընդգծում եմ) չիմանան, մի՞թէ իրանց պարտքը չափաի համարեն խրատելու այդ տեսակ ափաշկարայ, ամենին յայտնի, յարատե տկարներին՝ յետ կենալ ամուսնութիւնից. մի՞թէ իրանց պարտքը և իրաւունքը չափաի համարեն այս: Օրինակ՝ եթէ մի ընկնաւոր (էպիլեպտիք) կամ մի գինեմոլ—գիպսօման, որ ամիսը, կամ երկու ամիսը մի անգամ, մէկը՝ թալկացման է ենթարկւում, միւսը արբեցողութեան տրւում մի քանի օր շարունակ, վատ ցաւ, թոքախտ ունեցողը, որ հազիւ մի 2—3 ամիս առաջ ժամանակաւորապէս բժշկւել է,—եթէ դրանք բոլորը իրանց առողջ երեցած շրջանում ներկայանում են մի բժշկի, կամ նոյն իսկ մի բժշկական խորհրդի և ծածկելով իրանց մօտիկ անցեալը, բժշկական վկայական են կորզում

իրանց լիակատար առողջութեան մասին և քահանային ներկայացնում,—հարցնում եմ, քահանան, և նոյն իսկ յետին գիւղի քահանան, որ իւր աչքով տեսած է, մէկ չէ՛ տաան անգամ, այդ անձանց հիւանդական երևոյթները, մի՞թէ իրաւունք չունի մի կողմ դնելու բժշկական վկայականը և արգիլել պատկը: Ահա այսպիսի դէպքերի համար կարող ենք հաստատապէս և ամեն արդարութիւնով ասել, թէ ոչ միայն քահանաները, այլ և այդ հիւանդների հարևանները այս դէպքերը աւելի շուտ և աւելի հաստատ կարող են գիտենալ, քան թէ բժիշկները: Այդ չէ նշանակում թէ ես իբր ասած լինիմ, որ քահանաները աւելի լաւ կարող են հիւանդութիւններ ճանաչել, քան թէ բժիշկները...

Մարդ շատ միամիտ կամ պարզամիտ պէտք է լինի, որ կարծէ թէ մի բժիշկ կարող է այդպիսի բան ասել, ինչպէս այդ կարծում է «Առողջապահ» թերթում, ինձ անյայտ մի կօլլեգա Ա. ստորագրութեամբ: Հարկաւ, այդպիսի ողորմելի ենթադրութիւն անողը դեռ չի գիտակցում, թէ բանը ճիշդիսի գործնական և մեր կիւլտիւրի (կենսակրթութեան) աստիճանին համապատասխան հարցի մասին է (երբ Հայաստանի գիւղերում գիտնական բժիշկներ չունինք) և ճիշդիսի սկզբունքային, իրաւաբանական հարցի մասին է. այն է թէ՛ ա) հոգևոր դասը պէտք է ներգործական վճռադատ դեր ունենայ վերը յիշած աղաղակող ամենին ակնյայտի հիւանդութեան դէպքե-

րում և քահանաները պիտի համարեն՝ պատասխանատու հոգևոր իշխանութեան և հասարակութեան առջև ի դէպս զանցառութեանց այդ դէպքերում: Հասկանալի է թէ խօսքը այստեղ այն դէպքերի համար չէ, ուր մասնագիտական հմտութիւն է հարկաւոր հիւանդութիւնը ճանաչելու: Բ) Նպատակայարմար է արդեօք մեր հայերիս այժմեան քաղաքակրթական աստիճանում քահանային ամեն պատասխանատուութիւնից ազատել ամուսնացողների առողջութեան նկատմամբ և բոլոր պատասխանատուութիւնը զցել բժշկական վկայականի վրայ: Ուրիշ և հակիրճ խօսքերով՝ հարցը այն է թէ՛ քահանան պսակից առաջ պէտք է բժշկական վկայական պահանջէ իբր Էսպպիոօզ, թէ իբրև վերջնական վճռադատ դոկումենտ:

Իրաւաբան Степанов-ը, որ անցեալ տարի հրատարակել է ռուսերէն մի շահեկան տետրակ, «Врачебная тайна и указъ Армянскаго Синода о добрачномъ осмотрѣ» վերնագրով, իւր գրքոյկի 52—53 երեսների մէջ կանգնում է այդ էկսպերթական տեսակէտի վերայ, համեմատելով հոգևոր դասը դատարանական կազմի հետ, որը շատ դէպքերում հրաւիրում է մասնագէտներ (էկսպերտներ) այս կամ այն մասնագիտական խնդիրը լուսաբանելու: Սակայն վերջնական վճիռը ինքն է դնում, բժիշկների և այլ մասնագէտների ցուցումները ընդունելով միմիայն վկայութեանց շարքը: Ուրիշ կերպ էջմիածնի Սինոդի կարգա-

դրութիւնը և Խրիմեան Հայրիկի կոնդակը չէր էլ կարող raison d'être ունենալ. դա պէտք է հասկացի հրաման հոգեւոր դասից՝ դիմել բժեկին (կասկածելի և հակասական դէպքերում) իբրև Էկսպիերտի եւ ոչ վնուադասի, մանաւանդ այն դէպքերում, երբ քահանան տարակուսում է, թէ յիշեալ ախտերից ազատ է ամուսնացողը, բոլորովին բժշկած է, թէ դեռ չէ:

Եթէ այլ կերպ հասկացւի կոնդակը, ոչ մի բժիշկ իբրև հիւանդին բժշկող կամ պատահաբար քննող, իրան չպիտի թոյլ տար վկայական տալու, քանի որ դրանով դիպած կլինէր «բժշկական գաղտնիք» կոչւած հաստատութեան: Միայն է կսպերթը, որին ծխատէր քահանայի կողմից դիմում է ամուսնացողը, յօժարաբար խնդրելով ասել բոլոր ճշմարտութիւնը, կարող է հրապարակով յայտնել դիմողի այս կամ այն հիւանդութեան մասին, մանաւանդ սիֆիլիսի մասին:

Քանի որ հոգևոր դասը բժշկին իբրև էկսպերթի է դիմում, ապա ուրեմն վերջնական վճիռը պսակի արգելելու կամ թոյլատրելու, իրաւաբանական տեսակէտով էլ, պէտք է մնայ անխալտ հոգեւոր դասի իրաւասութեանը:

Սրանով քահանայական դասը պիտի կոչւի նորից, և ոչ թէ յետ մղւի, կատարել իւր կրթական կոչումը, ամուսնութեան դէպքերում էլ, առողջապահական գաղափարներ ներշնչելու ժողովրդին և ոչ թէ կրաւորական կամ անտարբեր լինելու, ամեն իրաւասութիւն տալով

բժշկական փկայականին և կոյրգիւրայն հետեւելով նրան:

Այդպէս հասկանալով բժշկական փկայականի պահանջումը հոգեւոր դասի կողմից, պ. իրաւաբան Ստեփանովը ասում է թէ՛ Էջմիածնի Սինօղի կարգադրութիւնը թէ՛ և չի համաձայնում Ռուսաստանում տիրող այդ հարցի նկատմամբ օրէնսդրութեան, բայց կարող է արդարանալ իբրեւ եկեղեցական կանոն միմիայն հայ եկեղեցու հօտի համար: Սակայն պ. Ստեփանովը, ինչպէս կերեւի, ծանօթ չէ հայ եկեղեցու ընդհանուր կանոններ սահմանելու և ընդունելու ձևին: Այդպիսի կանոնները կամ տիեզերական եկեղեցական ժողովներով են հաստատած, որ մեր եկեղեցին էլ ընդունած է, կամ մեր ընդհանուր եկեղեցական ժողովով ընդունւած են, որ և գործադրում են ամենուրեք, թէ ի Ռուսաստան, թէ Տաճկաստան և այլ ուրեք, ուր հայ լուսաւորչականներ կան: Էջմիածնի Սինօղը հայ եկեղեցու բոլոր հաւատացեալների համար ընդհանուր կանոն հրատարակելու իրաւունք չունի: Այդպիսի կանոններ կազմելը կվերաբերի Ամենայն Հայոց Հայրապետի իրաւասութեանը. Սա էլ այն ժամանակ կարող է կոնդակով հրատարակել ի գործադրութիւն, երբ այդպիսի կանոնը վաւերացած է ընդհանուր ազգային եկեղեցական ժողովով: Եթէ քաղաքական և այլ հանգամանքներ չներեն այդպիսի ժողով գումարելը, այս դէպքում դարձեալ Ամենայն Հայոց կաթողիկոսը պիտի հարցնէ

մեր միւս պատրիարքների, թեմակալ առաջնորդների, սրանց միջոցով քահանաների և ծխական համայնքների կարծիքը և ապա մեծամասնութեան որոշումը իր Հայրապետական կոնդակով կտարածէ իբրեւ ընդհանրական կանոն հայ եկեղեցու մէջ և միեւնոյնը կտայ Սինօղին ի հրահանգութիւն: Ինչպէս տեսանք զրոյցիս I բաժնում, այդպէս է ընդունում Հայրապետական իրաւասութիւնը ընդհանուր եկեղեցական կանոններ սահմանելիս՝ մեր այժմեան Վեհափառ Կաթողիկոսը: Այս ամենը շատ աւելի ընդարձակ կերպով բացատրւած էին 1905 թ. Պօլսոյ Բիւզանդիոնի էջերում Հ. Մ. ք. Մելեանի յօդուածներով. Եւ այդ ամենի հիմունքով էլ այն ժամանակաւ Պօլսի պատրիարք սրբազան Օրմանեան և Պօլսի Կրօնական Ժողովը, յայտնեցին հանգուցեալ Խրիմեան կաթողիկոսին իրանց անհամաձայնութիւնը Սինօղի կարգադրութիւնը ընդունելու և տաճկահայերի թեմերում գործադրելու: Այս պատճառով էլ ես ասում եմ զրքիս XI գլխում Սինօղի նոր կարգադրութեան առթով թէ՛ դա չի համապատասխանում մեր եկեղեցու իրաւական և աւանդական ձևին:

Այն ինչ՝ պաշտպանելով այդ հարցում էլ եկեղեցու հեղինակութիւնը և իրաւասութիւնը, մենք ոչ թէ յետադիմական քայլ ենք անում, այլ առաջ մղում թուլացած և քնած եկեղեցական ոյժերը, նոր կեանք, նոր գործութիւն նրանց ներշնչելով. զրքիս X գլխի վերջաբանում նորից

մի առ մի թուում եմ այն փրկարար գործողութիւնները, որ կոչւած է կատարելու հոգեւոր Սինօզը, եթէ կամենայ*, և վերջը աւելացնում եմ, «ահա այսպիսի կենսակրթական (կիւլտւրական) միջոցներով ամուսնութեան շրջանում և սրանց տկուն ու խիստ գործադրութիւնով միայն մեր հոգեւոր իշխանութիւնը կարող է բաւական նպաս-

*) Սինօզը կարող է, ասում եմ, շրջաբերականով պատւիրել առաջնորդներին և յաջորդներին 1) որ ամեն կերպ մաքառեն իրանց թեմերում և գաւառներում զլիսագնի սովորութեան դէմ, 2) որ պահանջեն քահանայից ներկայացնել հոգեւոր առեաններին ամուսնացողների չափաբերականները (մեթրիկ.), որպէս զի անչափահասների պսակ չ'կարողանայ տեղի ունենալ. 3) որ ցրեն քահանաների մէջ բժշկական մասնաժողովով կազմած և հոգեւոր իշխանութիւնից ընդունած հանրամատչելի դիտելիք այն ախտերի մասին, որոնց ունեցողներին ամուսնութիւնը արգելւում է. դրանք են առ նուազն՝ ակնյայտնի սիֆիլիստը, թոքախտը, ալկոհոլախտը, բորբ, էպիլեպսին և իդիօտիզմը: 4) որ քահանաները ջատագովեն իրանց քարոզներում մեր նախնի բարքերը, որոնք բարերարութեամբ դեռ տիրապետող են Հայաստանի մի քանի գաւառներում և մեր հայաբնակ փոքր քաղաքներում, ուր փեսայից զլիսագին պահանջելու սովորութիւն չկայ, ուր հարսնացւի օժիտի հետ զբաւ պահանջելը ոչ միայն սովորութիւն չէ, այլ ամօք իսկ համարւում է, ուր աղջկայ օժիտ համարւում են՝ նրա առողջութիւնը ու բարոյական յատկութիւնները, նրա հագուստեղէն և արդը վարդը: Այս տեղերից ահա տարածւել է հայ ընտանիքի, հայ մայրերի բարի համբաւը, այստեղից են դուրս գալի մեր փոքր ի շատէ առողջակազմ, տոկուն, կորովամիտ սերունդները...

տել մեր ցեղի վատասեուման առաջն առնելուն, մեր լաւագոյն բարքերի պահպանութեան: Այս միջոցների գործադրութիւնով մեր հոգեւոր Բարձրատեանը (Սինօզը) դուրս եկած չի լինիլ եկեղեցու իրաւասութեան սահմանից և մեր բոլոր կուսակցութիւնների միաբերան հաւանութիւնը և գործակցութիւնը պիտի վայելէր»:

Այս իմ գուշակութիւնը արդարանում է այժմ նրանով, որ իմ տեսակէտով պահանջւած մեր եկեղեցու բարեփոխումներին ջատագով դուրս եկան ոչ միայն մեր առաջադիմական օրգանները, այլ և պահպանողականները: Քանի որ ինչպէս վերը տեսանք, այդ տեսակ հասունացած բարեփոխումների աստիճանաբար կատարմանը, իւր բարձր հովանաւորութիւնը չէ զլանում մեր եկեղեցու այժմեան Ծայրագոյն Ղեկավարը՝ ամենայն հայոց կաթողիկոսը, ուրեմն՝ կարող ենք ևս առաւել յուսալ թէ այդպիսի փրկարար բարենորոգութեանց նախօրեակումն ենք: Այդ բարեփոխումները հայ ժողովրդի մեծամասնութեան մէջ իրագործելի են, ուստի ոչ երազական, այլ իրական առաջադիմութիւն պիտի համարւին*:

*) Այս բանին նոր ապացոյց—Պօլսոյ սրբ. Պատրիարքի օգոստ. 12-ի շրջաբերականը, որով հրաւիրւում են ձեռնհաս վարչութիւններ և անձինք պատրիարքարանում համագումարի՝ արդի պահանջած եկեղեցական

Մեր հակաճառութիւնը այդ կնճռոտ խնդրի մասին, իմ և բարեկամ կօլլեգաներիս մէջ, ես համաձայն եմ վերջացնել հետեւեալ տողերով, որոնցով փակում է իւր գրախօսութիւնն էլ դօկտ. Վ. Արծրունին. «Մենք պէտք է յուսանք այսուհետեւ, որ մեր բարձրագոյն Հոգեւոր իշխանութիւնը իրան պարտք կհամարի ճիշտ տեղեկութիւններ հաւաքել թեմերից նոր կանոնի գործադրութեան հետեւանքների մասին, կցանկայ իմանալ քահանաների և ծխական հոգաբարձուների կարծիքը, և հաւաքած նիւթերը կյանձնի մի յատուկ մասնաժողովի՝ ուսումնասիրելու և ընդհանուր զեկուցում պատրաստելու: Այդ նիւթը պիտի որոշի կանոնի նպատակայարմարութեան կամ անտեղիութեան խնդիրը և ոչ թէ մեր տեսական տրամաբանութիւնը»: Համաձայն եմ այդ պահանջին, որովհետեւ առաջուց համոզւած եմ թէ՛ վիճակագրական հետազոտութիւնը ևս առաւել պիտի հաստատէ, որ նոր կանոնը հէնց սկզբից եկեղեցական պարտադիր օրէնքի ոյժ չէ կարողացել ունենալ նոյն իսկ մեր շատ քաղաքներում: Սակայն քանի որ ժո-

բարեփոխութեան հարցերը քննելու Հետաքրքրական է Ադրիանապօլսոյ գաւառական վարչութեան այդ համագումարին առաջարկած ծրագիրը (տ. «Բիւզանդիոնի թ. 4214, այս տ. սեպտեմբերի 4-ի №»), ուր բերւած են մեր գրքում պարզաբանւած բարեփոխումների մեծ մասը: Այս ամենը առաջադիմութիւն է և ոչ յետադիմութիւն...
Ծան. հեղ.

ղովրդի գիտակցութիւնը յարուցանելը այդ հարցի էութեան մասին անհրաժեշտ ենք համարում մեր երկու կողմն էլ, ուստի գիտակից անձանց պարտքն է լուսաւորել ամբողջի միտքը գրաւոր թէ բերանացի խրատներով, բրօշիւներ ու թերթեր ցրելով ժողովրդի մէջ, եկեղեցու ամբիոնից քարոզելով, և այլն:

Այս վերջի տեսակէտով ես այստեղ էլ պէտք է դնեմ նոյն կարծիքը Սինօդի նոր կարգադրութեան առթով, ինչ որ գրքումս բերւած է.

Ո՛րքան որ անընդունելի է Սինօդի կարգադրութիւնը բժշկական վկայականի մասին, իբրեւ ընդհանուր Հայաստանեայց եկեղեցու կանոն, որքան որ լի է նա թերութիւններով,—նոյնքան և օգուտներ ունեցաւ նա, առաջ բերելով անհամար խորհրդածութիւններ այդ հարցի շուրջը, որոնք երբէք տեղի չպիտի ունենային այդ չափով առանց այդ կանոնի գոյութեան, ազդու կերպով բանալով մեր քահանաների և ժողովրդի աչքը այդ հարցի մասին: Հէնց այսօրւայ մեր երեկոյթն էլ լիակատար ապացոյց է այդ բանին:

Վերջնական ե գրական ցութիւնը կամ համառօտ բանաձևը երկրորդ զրոյցիս այս է՝

Հանգուցեալ Խրիմեան Կաթողիկոսի կոնդակը՝ ամուսնացողներից բժշկական վկայական պահանջելու մասին, պէտք է ընդունւի ոչ իբրեւ ստիպողական ընդհանուր եկեղեցական օրէնք, այլ՝ իբրեւ մասնաւոր հրահանգ հայոց եկեղեցու բոլոր քահանաներին ամենուրեք՝

ա) Առանձին ուշադրութիւն դարձնել ամուսնացողների առողջական հանգամանաց նախ քան պսակը (սիֆիլիստ, թոքախտ, ալիօճօլախտ, բոր, էպէլէպսի և իդեօտիզմ (ապուշութիւն)։

բ) Այս դիտմամբ մի քանի անգամ յիշածս յարատե հիւանդութիւնների աւելցատնի դէպքերում եկեղեցական իրաւասութեամբ արգիլել պսակը, մինչ ցառողջանալները։

գ) Վիճելի կամ կասկածելի դէպքերում միայն մեր քահանան, հրատարակած կաթողիկոսական կոնդակի հիման վրայ, պէտք է պահանջէ՝ առնւազն երեք յայտնի բժիշկների գրաւոր վկայութիւնը խօսեցեալների առողջութեան մասին։

դ) Երբ քահանան ի չարն է գործ դնում եկեղեցական իրաւասութիւնը և դրամաշորթութեան կամ այլ չար նպատակներով հիւանդութիւն է տեսնում այնտեղ, ուր հիւանդութիւն չկայ և պսակը իբրեւ ծխատէր արգելում է, խօսեցեալները, նոյն կաթողիկոսական կոնդակի հիման վրայ, բժշկական խորհրդի վկայութեանն են դիմում և գրաւոր վկայականը իրանց առողջութեան մասին ներկայացնում են հոգևոր բարձր իշխանութեան, խնդրելով հրամայել մի այլ քահանային պսակը կատարել, իսկ չարամիտ քահանային պատժել։

Այսպէս հասկացուած Հայրիկի կոնդակը և այս կերպ բացատրւած այժմեան մեր Վեհափառ Հայրապետի կողմից, այդ բացատրութիւնը անվիճելի կլինի, մեր համայն ժողովրդի և հո-

գեոքականութեան կողմից մեծ սիրով կընդունուի և կնճռոտ հարցն էլ կը վերջանայ*։

*) Այս աշխատութիւնը տպագրութեան յանձնած էի երբ ձեռքս հասաւ բժշկապետ Մ. Մուրադեանի «Սիֆիլիս» վերնագրով գիրքը, ուր մի գլուխ (69—72 էր.) նւիրուած է «Բժշկական վկայականի» հարցին։ պարոնը խիստ ջատագով է ամուսնացողներից առողջութեան վկայական պահանջելուն, ոչ միայն մեր քաղաքներում, այլ և մեր գիւղերում։

Նա ասում է «Ամեն կողմից քննելով (sic) այս հարցը, դժւար է լուրջ արգիւքներ գտնել նրա (վկայականի պահանջի) գործադրութեան համար գիւղի վերաբերութեամբ»։

Մարդ պէտք է մի երազական աշխարհում ապրած լինի, որ ամեն կողմից քննելով հարցը, մեր հայ գիւղերի նկատմամբ դայ այդպիսի եզրակացութեան։ Մարդ պէտք է մեր գիւղերը ներկայացնէ իրան մի որ և Բոննէքտեկիւթ ամերական շտաուի կամ Նորվեգիայի գիւղեր բազմազան բժիշկներով, որ հրապարակով այդպիսի կարծիք յայտնէ։ . . .

Իսկ Թիւրքաց և Պարսկական Հայաստանի նկատմամբ հեղինակը ցանկանում է՝ դեռ այդ կողմերի հայերին՝ «տէր լինել իրաւական կիւլտիւրական այնպիսի բարեկեցութեան, որ այնտեղ ևս հնարաւոր լինի մտցնել այդ մեր եկեղեցական լաւ օրէնքը»։

Հեղինակը մոռանում է թէ՛ մի ժողովրդի օրէնսդիրներ՝ օրէնքները սահմանում են այդ նոյն ժողովրդի զարդացման, կիւլտիւրի և կարողութեան համեմատ և ոչ թէ՛ ընդհակառակը։ Առհասարակ պէտք է խոստովանել, որ դօկտ. Մ. Մուրադեանը շատ թեթեւ գիտական պաշարով է մօտեցել այդ ծանրակշիռ հարցին։

Ծան. հեղ.

III Զրոյց

Տիկնայնք և Տեւրք.

Մնում է ինձ, համաձայն գրոյցներիս ծրագրի, համառօտ բացատրութիւն տալ իմ միւս քննադատների մի քանի այլ նկատողութիւններին, որպէս զի թիւրիմացութեան տեղիք չը մնայ:

Գրքիս I և II գլուխների դէմ մի երկու նկատողութիւններ յայտնւեցան, որոնցով կասէք թէ՛ կամենում են հերքել աշխատութեանս հիմնաւոր գաղափարներից մէկը, որ կարմիր թելով անցնում է համարեա բոլոր գլուխների միջով. այն է թէ՛ «հին հեթանոսական ժամանակներից քուրմերը, մարգարէները՝ բժիշկների դեր ևս կատարելով իբրեւ օրէնսդիրներ, շատ անգամ սահմանած են մարդկային կենցաղի կարեւոր շրջանների համար առողջապահական կանոններ հոգեւոր ծէսերի կեղևի տակ, որոնցից մի քանիսը մտած են անփոփոխ յետագայ կրօնների մէջ*»:

Այսպէս՝ իմ բերած օրինակը թլպատութեան ծէսի մասին իբրեւ թէ՛ վերը բերածս միտքը չի հաստատում. քննադատներս ճիշտ են ասում, թէ այդ ծէսը միայն հրէաների և մահմեդականների մէջ չէ, այլ՝ շատ հին ժամանակ-

*) Ի հաստատութիւն այս գաղափարիս տես—
Օրմանեան Մաղաքիա արքեպիսկոպոսի կարծիքը գրոյցիս I մասում:

ների ծէս է, երբ երեխաներին բերում էին կուռքերի մօտ, թլպատում և անդամից կտրած մասը զոհ բերում կուռքերին. «Թլպատութիւնը ասում է բժ. Աղասարեանցը ամենատարածւած մի ծէս է, որ մարդկութեան, կարելի է ասել, $\frac{1}{4}$ մասի մէջ գոյութիւն ունի»: Աֆրիկայի արաբների մի քանի ցեղերի մէջ սովորութիւն է նոյն իսկ աղջիկներին թլպատելը, (կտրելով նրանց համոցը (clitoris) և բուռոցի (vulva) փոքր շրթուքները): Քննադատներիս կարծիքով այդ ծէսը իբրեւ թէ մնացորդ է ինչ-որ «ատավիզմի», որ և է նշանակութիւնից գուրկ կամ թէ կուռքերի բարկութիւնը մեղմացնելու կրօնական հաւատի վրայ հիմնւած: Իսկ ես, շատ բժիշկների կարծիքին համաձայն, պնդում եմ, թէ այդ ծէսի կեղևի տակ թաղնւած է բնագդական կերպով առողջապահական հիմք, թէ հին և թէ այժմեան ցեղերի մէջ, վաղօրօք հեռացնելու մարմնից այն կտորները, որոնք ամենից շատ կեղտ են վերցնում և պահում իրանց մէջ, շատ անգամ բորբոքելով սեռական անդամները: Եթէ այդ չլինէր, միթէ աւելի դիւրին չէր լինի երեխաների սրունգի կամ փորի կաշուց մի կտոր կտրել և զոհ բերել ծէսը կատարելու համար. սակայն ծէսի առաջին հիմնողները պարզ գիտակցել են թէ՛ մարդուս ապագայ կեանքում սրտեղից կաշին կտրելը աւելի օգտաւէտ կլինի:

Եթէ թլպատութիւնից յետոյ անցնենք Մահամէդ մարգարէի օրէնսդրութեան՝ համադր-

ժամանակ անպատճառ սեռական անդամների լուսացումներ կատարելուն օրական մի քանի անգամ, միթե դարձեալ կարելի է ուրանալ թէ այդ ծէսի տակ, այո, առողջապահական հիմք է դրած, այն է մաքրասիրութիւն:

Անցնելով գրքիս VI գլխի բովանդակութեան, այն է՝ պահեցողութեանց խնդրին, յատկապէս պատ և ուտիս օրերի սահմանելուն, նկատողներ եղան, թէ ես ճշմարտութիւնից փաքը ինչ շեղած եմ, գտնելով առողջապահական հիմունք այդ կարգադրութեան մէջ. նոքա ասում են թէ պատը սահմանել են եկեղեցու հայրերը ինքնազրկողութեան, ապաշխարութեան և առհասարակ ողջախոն վարք ու բարքի համար, փոխանակ անդամ դար բղջախոն կեանք վարելու:

Ընդունում եմ ես այդ միտքը և ասում եմ քննադատներին թէ՝ հէնց առողջաբանութիւնն էլ մարդու երկարակեցութեան համար պահանջում է նոյնը, ինչ որ սուրբ հայրերը պահանջել են: Հանապազօրեայ առատ-առատ մատկերութիւնը և ցոփ կեանքը, ինչպէս հոգուն, նոյնպէս և մարմինն մնաս են. ինչու չկարծել թէ սուրբ հայրերը հոգին մտածելով՝ մարմինն էլ, այսինքն՝ առողջապահութիւնն էլ ի նկատի են ունեցել. այս մէկ: Երկրորդ նկատողութիւնն այն է, թէ ես պատին մեծ նշանակութիւն տալով, նորան իբր անխախտելի օրէնք եմ քարոզում, նոյն իսկ հիւանդ մարդոց համար, որոնք չեն կարող տանել պատի կերակուրներ... Այս բանը պարզ

թիւքիմացութիւն է. Ահա իմ խօսքերը, (տ. եր. 17) «Մսեղէն և բանջարեղէն կերակուրների որոշեալ ժամանակամիջոցների փոփոխութիւնով մարդու առողջութիւնը աւելի կապահովւի. այս է պատի միտքը». Յետոյ աւելացնում եմ՝ «Երանի թէ մեր հոգեւորականներն էլ այս մտքով հասկանային պահքի նշանակութիւնը, ժողովրդին քարոզէին դրա բուն առողջապահ սկզբունքը և պատը չ'դարձնէին մի ստիպողական անմիտ կրօնական ծէս, որից ազատելու քնակաւն մտակեր է դառնում, չիմանալով բանի էութիւնը»: Սորանից ոչ ոք չի կարող եզրակացնել, թէ ես քարոզում եմ անքակտելի պատ նոյն իսկ նրանց համար, առողջ թէ հիւանդ, որոնք չեն տանում պատի կերակուր. իմ ասածը բոլորովին ընդհակառակն է...

ԲԺ. Աղասարեանցն էլ ընդունում է կենտապատի և շաբաթապատի օգուտները. գալով մեծ պատին, իբրեւ թէ դորան պահողներից շատերը ստանում են հաւակոյր հիւանդութիւնը, որը անցնում է մեծ պատից յետոյ. բացի այդ մեծ պատը պահողները, նրա կարծիքով, իբր թէ բոլորը նիհարում են և ստամոքսի խանգարմունք ստանում. Այդ ամենը ճիշտ է, եթէ պատի կերակուրները վատ ձէթէ վրայ են պատրաստում և բաւական անդարար նիւթեր չեն պարունակում. Եւրոպայում այժմ մեծ քանակութեամբ բուսականների (վեգիտարիանիստների) ընկերու-

թիւններ կան, որ ոչ թէ 50 օր, այլ՝ տարիների ընթացքում միայն պատի կերակուրներ են ուտում, և ամենևին վերը յիշած տեսակի հիւանդութիւնների չեն ենթարկւում:

Երկու խօսք էլ ինձ անյայտ մի քննադատի կարծիքների մասին՝

«Тифлисский Листок» թերթի աշխատակիցը (И. П.) անցեալ տարւոյ մի համարում մի այսպիսի նկատողութիւն էր արած գրքիս մասին, թէ ես իբր գրքումս եկեղեցու դաւանաբանական հիմքերին էլ եմ դիպչում և այդ մասերում շատ թերութիւն ունի աշխատութիւնս. Սորա դէմ ես կ'դնեմ յարգելի ընկերակցիս, դօկտ. Վ. Արծրունու հետեւալ տողերը սրա գրախօսականից. «Բաբայեանի դրքոյկը իբրև գիտական հեղինակութիւն միտք չէ ունեցել շօշափելու հայ ժողովրդի կրօնական զգացումները. ընդհակառակը, նա նպատակ է դրել աւելի սերտ կապելու ժողովրդին իր եկեղեցու հետ (մանաւանդ ինտելիգենտ տարրը, որը սառած է դէպի նա) առողջական հիմունքների վրայ դնելով եկեղեցական ծէսերը, և իրաւի, նորա գրքի իւրաքանչիւր էջի մէջ ընթերցողը զգում է, որ հիղինակը աշխատում է աւանդութիւնները խստիւ պահպանելով՝ դարձնել նրանց անփնաս ժողովրդի և իրան հոգևորականութեան համար, նա քարոզում է որ ծիսակատարութիւնը արդի առողջապահութեան պահանջներին հետևի»: Երևի թէ՛ այս ամենի համար է, որ յիշեալ ուղևորէն թերթի աշխա-

տակիցը իւր մի այլ գրախօսութեան վերջում ինձ դասում է խիստ պահպանողականների շարքում.

Սորան համառօտ պատասխանելով վերջացնեմ զրոյցս. իրաւի է, թէ ես այն մեր գործողների շարքումը չեմ կարող դասելի, որոնք համարում են թէ կրօնը ուրեմն և եկեղեցին այլ ևս-դեր չունին կատարելու մեր ազգային կեանքի մէջ. եկեղեցուն մօտենալով, առաջադիմական մարդը՝ աշխարհական թէ հոգևորական՝ պէտք է իբր աշխատի օգտւել միայն նրա (եկեղեցու) առժամանակեայ արտօնութիւններից, ծայրայեղ նպատակների համար, սակայն առանց թոյլ տալու, որ եկեղեցին աստիճանաբար—քայլ առ քայլ բարեփոխւի և եկեղեցական դասը բարձրանայ իւր այժմեան ստոր դրութիւնից. ընդհակառակը՝ այդպիսին պէտք է պահանջէ մի անգամից արմատական յեղաշրջում և կամ ամեն կերպ արգելքներ հանէ եկեղեցու վերակենդանութեանը, որպէս զի նա անկեալ դրութեամբ՝ ինքն իրեն մեռնի»:

Այո, ես այդ տեսակ գործիչների շարքումը չեմ. և եթէ դորա համար ինձ խիստ պահպանողական յորջորջեն, ես այդ մասին վշտացողը չ'եմ. որովհետև գիտեմ և տեսած եմ կեանքումս պահպանողականներ, ովքեր մեր կեանքի մէջ շատ առաջադիմական գործեր են ստեղծել և առաջադիմութեան կոթողներ կանգնեցրել իրանց յիշատակ, և ընդհակառակը՝ շատ առաջադիմական

կոչւածներ, որ անտանելի և քստմնելի յեաղիմական գործեր են կատարած: Այս վերջի տեսակի անձինք մեր եկեղեցու փարախը, երբեմն մտնում են ոչ թէ նրան շինելու, կարգի դնելու համար, այլ՝ յատկապէս նրան քանդելու և կամ փարախի հօտը բաժան—բաժանելու: Այսպիսի առաջադիմականների շարքում լինելը ես ինձ համար պատիւ չեմ կարող համարել, և իմ այսօրուայ զրոյցով ել աշխատում եմ հեռու պահել այդ շարքից իմ բժիշկ բարեկամներիս, որոնք ուրիշ շատ հարցերում ինձ գաղափարակից են:



Նկատած վրիպակներ

Եր.—հջ	սպւած է	պեճ է կարգալ
11—13 վեր.	հետադառութիւններից	հետադառութիւններէց.
26— 8 »	հնթարկելուց	հնթարկելոց
38— 9 ներ.	ընտելերը	ընտելերը
40—12 »	չէ վճռում	չէ վճռում
61— 1 »	Վեգիտարիանիստների	Վէգէտարիանների
64— 4 »	այսօրուայ զրոյցով	այս օրերի զրոյցներովս
56— 5 վեր.	այս դիտմամբ	այս՝ դիտմամբ
»—» »	յիշածս	յիշածս,



Երկրորդ հատոր	Հատոր	Գրք	Գրք
Հիմնական տվյալներ	Հիմնական տվյալներ	Հիմնական տվյալներ	Հիմնական տվյալներ
Գրք 1	Գրք 1	Գրք 1	Գրք 1
Գրք 2	Գրք 2	Գրք 2	Գրք 2
Գրք 3	Գրք 3	Գրք 3	Գրք 3
Գրք 4	Գրք 4	Գրք 4	Գրք 4
Գրք 5	Գրք 5	Գրք 5	Գրք 5
Գրք 6	Գրք 6	Գրք 6	Գրք 6
Գրք 7	Գրք 7	Գրք 7	Գրք 7
Գրք 8	Գրք 8	Գրք 8	Գրք 8
Գրք 9	Գրք 9	Գրք 9	Գրք 9
Գրք 10	Գրք 10	Գրք 10	Գրք 10
Գրք 11	Գրք 11	Գրք 11	Գրք 11
Գրք 12	Գրք 12	Գրք 12	Գրք 12
Գրք 13	Գրք 13	Գրք 13	Գրք 13
Գրք 14	Գրք 14	Գրք 14	Գրք 14
Գրք 15	Գրք 15	Գրք 15	Գրք 15
Գրք 16	Գրք 16	Գրք 16	Գրք 16
Գրք 17	Գրք 17	Գրք 17	Գրք 17
Գրք 18	Գրք 18	Գրք 18	Գրք 18
Գրք 19	Գրք 19	Գրք 19	Գրք 19
Գրք 20	Գրք 20	Գրք 20	Գրք 20
Գրք 21	Գրք 21	Գրք 21	Գրք 21
Գրք 22	Գրք 22	Գրք 22	Գրք 22
Գրք 23	Գրք 23	Գրք 23	Գրք 23
Գրք 24	Գրք 24	Գրք 24	Գրք 24
Գրք 25	Գրք 25	Գրք 25	Գրք 25
Գրք 26	Գրք 26	Գրք 26	Գրք 26
Գրք 27	Գրք 27	Գրք 27	Գրք 27
Գրք 28	Գրք 28	Գրք 28	Գրք 28
Գրք 29	Գրք 29	Գրք 29	Գրք 29
Գրք 30	Գրք 30	Գրք 30	Գրք 30
Գրք 31	Գրք 31	Գրք 31	Գրք 31
Գրք 32	Գրք 32	Գրք 32	Գրք 32
Գրք 33	Գրք 33	Գրք 33	Գրք 33
Գրք 34	Գրք 34	Գրք 34	Գրք 34
Գրք 35	Գրք 35	Գրք 35	Գրք 35
Գրք 36	Գրք 36	Գրք 36	Գրք 36
Գրք 37	Գրք 37	Գրք 37	Գրք 37
Գրք 38	Գրք 38	Գրք 38	Գրք 38
Գրք 39	Գրք 39	Գրք 39	Գրք 39
Գրք 40	Գրք 40	Գրք 40	Գրք 40
Գրք 41	Գրք 41	Գրք 41	Գրք 41
Գրք 42	Գրք 42	Գրք 42	Գրք 42
Գրք 43	Գրք 43	Գրք 43	Գրք 43
Գրք 44	Գրք 44	Գրք 44	Գրք 44
Գրք 45	Գրք 45	Գրք 45	Գրք 45
Գրք 46	Գրք 46	Գրք 46	Գրք 46
Գրք 47	Գրք 47	Գրք 47	Գրք 47
Գրք 48	Գրք 48	Գրք 48	Գրք 48
Գրք 49	Գրք 49	Գրք 49	Գրք 49
Գրք 50	Գրք 50	Գրք 50	Գրք 50
Գրք 51	Գրք 51	Գրք 51	Գրք 51
Գրք 52	Գրք 52	Գրք 52	Գրք 52
Գրք 53	Գրք 53	Գրք 53	Գրք 53
Գրք 54	Գրք 54	Գրք 54	Գրք 54
Գրք 55	Գրք 55	Գրք 55	Գրք 55
Գրք 56	Գրք 56	Գրք 56	Գրք 56
Գրք 57	Գրք 57	Գրք 57	Գրք 57
Գրք 58	Գրք 58	Գրք 58	Գրք 58
Գրք 59	Գրք 59	Գրք 59	Գրք 59
Գրք 60	Գրք 60	Գրք 60	Գրք 60
Գրք 61	Գրք 61	Գրք 61	Գրք 61
Գրք 62	Գրք 62	Գրք 62	Գրք 62
Գրք 63	Գրք 63	Գրք 63	Գրք 63
Գրք 64	Գրք 64	Գրք 64	Գրք 64
Գրք 65	Գրք 65	Գրք 65	Գրք 65
Գրք 66	Գրք 66	Գրք 66	Գրք 66
Գրք 67	Գրք 67	Գրք 67	Գրք 67
Գրք 68	Գրք 68	Գրք 68	Գրք 68
Գրք 69	Գրք 69	Գրք 69	Գրք 69
Գրք 70	Գրք 70	Գրք 70	Գրք 70
Գրք 71	Գրք 71	Գրք 71	Գրք 71
Գրք 72	Գրք 72	Գրք 72	Գրք 72
Գրք 73	Գրք 73	Գրք 73	Գրք 73
Գրք 74	Գրք 74	Գրք 74	Գրք 74
Գրք 75	Գրք 75	Գրք 75	Գրք 75
Գրք 76	Գրք 76	Գրք 76	Գրք 76
Գրք 77	Գրք 77	Գրք 77	Գրք 77
Գրք 78	Գրք 78	Գրք 78	Գրք 78
Գրք 79	Գրք 79	Գրք 79	Գրք 79
Գրք 80	Գրք 80	Գրք 80	Գրք 80
Գրք 81	Գրք 81	Գրք 81	Գրք 81
Գրք 82	Գրք 82	Գրք 82	Գրք 82
Գրք 83	Գրք 83	Գրք 83	Գրք 83
Գրք 84	Գրք 84	Գրք 84	Գրք 84
Գրք 85	Գրք 85	Գրք 85	Գրք 85
Գրք 86	Գրք 86	Գրք 86	Գրք 86
Գրք 87	Գրք 87	Գրք 87	Գրք 87
Գրք 88	Գրք 88	Գրք 88	Գրք 88
Գրք 89	Գրք 89	Գրք 89	Գրք 89
Գրք 90	Գրք 90	Գրք 90	Գրք 90
Գրք 91	Գրք 91	Գրք 91	Գրք 91
Գրք 92	Գրք 92	Գրք 92	Գրք 92
Գրք 93	Գրք 93	Գրք 93	Գրք 93
Գրք 94	Գրք 94	Գրք 94	Գրք 94
Գրք 95	Գրք 95	Գրք 95	Գրք 95
Գրք 96	Գրք 96	Գրք 96	Գրք 96
Գրք 97	Գրք 97	Գրք 97	Գրք 97
Գրք 98	Գրք 98	Գրք 98	Գրք 98
Գրք 99	Գրք 99	Գրք 99	Գրք 99
Գրք 100	Գրք 100	Գրք 100	Գրք 100

23) Случай спастического спинального паралича в связи с истерическими формами. (протоколы 1896 и 1897 г. г. Демонстрация аппарата Droult'a (прот. 1899 г.)

24) Различные типы западно-европейских санаторий по личным наблюдениям. (труды съезда Кавк. врачей. 1902 г.)

25) Об учреждении района охраны для Тифлиских Минеральных вод (ibidem)

26) Измерительные и защитительные приборы для рентгенотерапии (прот. 1905 г.)

27) Критика статей А. П. Артемьева: «Тифлиς как климатическая станция». (прот. 1901 г.)

28) Автореферат французского сообщения о Кавказских Минеральных водах: Автореферат «Черговой гигиены» (прот. 1909 г.)

29) По поводу 2-го Всероссийского Съезда бальнеологов (прот. 1903 г.)

Труды автора в других изданиях:

30) Гидроэлектрические ванны (Труды П. Пироговского Съезда врачей. По секции Электротерапии: электроды—перчатка (Тр. V Пир. С. р. в.)

31) Материалы к вопросу о влиянии гидроэлектрических ванн на кожную чувствительность и на артериальное давление (дисс. Спб. 1886 г.)

32) Тифлиские Минеральные воды. Неправильная их эксплуатация. (Военно—Медицинский журн. за Июнь 1898 г. и отдельными книжками)

33) Результат, лечения в Абастумане сердечных больных (Военно—медич. журн. за 1900 г. и отдельными книжками).

34) О современном состоянии Абастумана. Можно ли его назвать первоклассным курортом? (Три статьи в № 3, 5 и 10 «Русского Врача» за 1904 и в трудах 2-го Всеросс. Съезда бальнеологов)

35) Современное состояние рентгенотерапии в Париже (Записки русск. бальнеологического об—ва в Пятигорске за 1905 г.)

36) Замечки о Кавказск. Минеральных водах, специально о Нарзане (Вестник Бальнеологии, Климатологии № 2 за 1910 г.)

Письма из Парижа («Русский врач» за 1907—8 г. г.)

Գերմաներէն.

37) Ein verbessert. Mikrotom für grosse Schnitte aus d. Gehirn (Psychiatrisches Centralblatt № 6, 7. J. 1876)

Ֆրանսերէն.


38) Traitement des maladies du coeur aux Eaux minér. d'Abastouman. (Annales d'hydrologie médicale T. IV № 8.)

39) Les sources minérales de Tiflis (Archives générales d'hydrologie, de climatologie etc. 1899, № 11.)

40) Les eaux minérales du Caucase, en particulier la ville Kislovodsk et sa source de Narzan. (Annales de la Société d'hydrologie médicales de Paris, 1909.)

Հնդկնական հայերէն միւս աշխատութիւնները.

- 41) Ուսումնարանի առողջապահութեան հարցեր, 1879 թ. Թիֆլիզ. («Փորձ» ամսագրից արտատպած առանձին գրքերով)
- 42) Ֆրեօքսիան ծաղկոցների (մանկապարտէղների) առողջապահութիւն. (դասախօս ընդհ. հայ ուսուցչական ժողովում) 1882 (արտատպ. «Արձագանք»-ի №№ 35, 36 և 37)
- 43) Գրքերի աղղեցութիւնը մարդուս առողջութեան վրայ. երեք դասախօսութիւններ Թիֆլիզում 1880 թ. («Փորձ» երկու համարներ,)
- 44) Արդի ուղղութիւն առողջաբանութեան և բժշկականութեան մէջ, զրոյցներ ընտանեկան երեկոյթներում, 1886. (Յանելում «Արձագանք»-ի)
- 45) Բարակայաւ—Ժորախտը և նրա տարածման առաջն առնելու միջոցները նոյնը բուսերէն և վրացերէն, 1889 թ. Թիֆլիզ (հրատարակութիւն Կայսերական Գովկա, բժշկակ. ընկերութեան):
- 46) Ինֆլուենցա կամ վարակազուժ (արտատպ. «Աղբիւր—Տարադից»): «Թաքախտ», «Ժօլիք» և այլ ժողովրդական գրքոյկներ և թերթիկներ (հրատ. Կայս. Գովկ. բժշկ. ընկ. 1904—1905 թ. թ.)
- 47) Երկու լենձորածախ տղայոց պատմութիւն կամ թուաբանութիւն ծան—Մասէի օրինակով. Պետր. հայ ուսան. աշխատ. 1871 թ. (Էջմիածնայ տպար. հրատարակութիւն)
- 48) Ուսուցիչներ պատրաստելու խնդիրը. 1869 («Արարատ» ամսագրի 2 №№) Պետ. հ. Ո. Ա.
- 49) Որդիք առաւել կրթութեամբ քանզ ծնողը—մտնկավարժական—հրապարակախօսական. Դիմբեցի («Փորձ» 1879 թ.)
- 50) Ներսիսեան դպրոցի 50—ամեայ Յօրեւեանի աթոյ. երկու տետրակ. ուսուցչական ցենզի խնդրին նւիրած. Դիմբեցի ստորագրութեամբ 1874 թ. Թիֆլիզ:
- 51) Հառիճոյ վանքի հոգարարութեան մասին (հրապարակախօսական). «Փորձ» 1879 թ. № 1.
- 52) Հիպոստիզմի (քնարրութեան) զործաղբութիւնը հին ժամանակ և այժմ («Արձագանք» 1890 թ. №№ 4 և 5)
- 53) Եկեղեցական առողջաբանութիւն. Թիֆլիզ 1909 թ.



Գ. Ի. Ն. է. 40 Կ Ո Պ.

Պատահաբար գտնուում է Թիֆլիզ «Գուտտաներիզ» գրախանութում, Աղէքսանդրապոլ՝ «Շիրակ» տպարանախանութում:

ՀՀ Ազգային գրադարան



NL0272028

1976